


L53Lr ԶԱՐԻՔՈՂ

Կորան մարգարես

Գիշես  
1913



Լեռն ԳԵՐԻԲԵԱՆ

# ԿՈՐԱԾ ՄԱՐԳԱՐԻՏ

ՊԱՏՄԻԱԾՔ



Թ. Ի. Ֆ. Ա. Խ. Ա.

Տպարան «Էլսպետանո», Ելիզ. փողոց Հե 17

1913

891.99

Դ - 34

Լեզվի ԿԱՐԻՔԵՐՆ

# ԿՈՐԱԾ ՄԱՐԳԱՐԻՏ

ՊԱՏՄԻԱՆ Ժ

000

336



Թ. Խ. Ֆ. Լ. Բ. Ս  
Արագատիս Հեղափոխական ելիկ. փողոց № 17  
1913



# ԿՈՐԱԾ ՄԱՐԳԱՐԻՏ

Պատմւածք

## I.

Այդպէս, ուրեմն, սիրելի ընկերուհի, դու փափառումն ունենալ իմ կեանքի պատմութիւնը սկսած այն օրից, երբ մենք աւարտեցինք զպրոցը և ճակատագիրը շուտով մեզ բաժանեց, քեզ տանելով հեռաւոր երկիր, ինձ թողնելով մեր ծննդավայրում:

Ուրախ եմ: Ես կըզրեմ ճշմարտութիւնը և միմիայն ճշմարտութիւնը, առանց բանաստեղծական թռիչքների:

Ախ, ծանը է ինձ համար վերյիշել և վերապըել այն տառապանքները, որ ես կըել եմ իմ բանամեայ ամուսնական կեանքում: Բայց դու պահանջում ես այդ: Օօ, միայդ այդ չէ: Ես ինքո զգում եմ անյալթելի պահանջ իմ հոգին բանալու մի մտերիմ ընկերուհու առջե, որին այնքան սիրել եմ և սիրում եմ և որի մասին փայփայում եմ ամենաքաղցր յիշողութիւններ:

Ով գիտէ, գուցէ, ցնցուի սրտիս լեզին թղթին յանձնելով, զգամ որոշ թեթևութիւն: Զէ՞ որ կեանքի խորթ զաւակների միակ սփոփանքն իրանց տուայտանքներն ութիշներին պատմելն է: Գոնէ ես երջանիկ եմ, որ քո մէջ գտնում եմ մի կամաւոր ունկնդիր:

Ունեցիր, ուրեմն, համբերութիւն կարդալու բուլուը, ինչ որ պիտի պատմի քեզ իմ խորը բարեկամական անկեղծութիւնը: Մեղքն իմը չի մնիւ, եթէ ձանձրանաս:

Դու հարցնում ես, ինչպէս պատահեց, որ ես, առանց երկար մտածելու, կեանքս կապեցի մի մարդու հետ, որին այսօր ատում եմ սրտիս ամբողջ թոյնով, հոգոյս ամբողջ թափով, իմացականութեանս ամբողջ ուժով:

Ախ, սիրելիս, դա այն բարդ հոգեբանական հարցերեց է, որոնց լուծումը տակաւին ոչ մի գրքում չեմ կարդացել: Գիտեմ միայն, որ մենք կանայքս, քանի օրիորդ ենք, կեանքքի անյատակ ովկիանոսով, որ կոչում է ամուսնութիւն, համարում ենք մի դիւրին անցնելի գետակ: Քանի անբաղդներ եմ ճանաչում, որոնք, առաջին պատահած անցորդի թեր բռնած, ընկել են նրա մէջ, առանց իրանց ոյժերը չափելու: Եւ երբ ընկել են, իսկոյն զգացել են իրանց սոսկալի սխալը: Աւաղ, այն ժամանակ, երբ արդէն ուշ է եղել:

Եւ խորասուզել են ու խեղդել:

Ես գեռահաս մի էակ էի, լի վարդագոյն յոյսերով և քաղցր երազներով: Միրում էի կեանքն այնպէս, ինչպէս ծաղիկն արել, և չունէի նրա դէմ ոչ մի ոխ, ոչ մի քէն: Ժպտում էի նրան իմ անմեղ պատանեկան ժպիտով, և թւում էր ինձ, որ նա ևս ժպտում է ինձ, նա ևս սիրալիր է դէպի ինձ: Ես հաւատում էի նրա բարիքներին անվերջ, անսահման:

Եւ մի օր նա կանգնեց իմ առջև այն մարդու կերպարանքով, որ ապագայում պիտի այնպէս անողորմաբար ջախջախէր իմ երջանիկ տեսչերը:

Երբ նա սկսեց հետամուտ լինել ինձ, ես չըհետաքրքրեցի ոչ նրա անցեալով, ոչ ներկայով, ոչ շըջանով և ոչ իւր արտաքինով: Նրա հոգին ու սիրտը, նրա բարյական աշխարհն էր, որ ինձ զբաղեցրեց: Իմ ուօմանտիկ երեսակայութիւնը փափագից գտնել նրա մէջ մարմնացումն իմ սնոտի երազների—մարդ բառիս

ընդարձակ իմաստով: Թող նա լինէր վերջին չքաւորը, բաւական էր, որ ես նրան սիրէի և նրանից սիրէի ու ես պատրաստ էի կրել ճակատագրի բոլոր հարւածներն այդ փոխադարձ սիրոյ անունով:

—Օրիորդ, —ասաց նա ինձ մի օր, —մի նայէք իմ սե կեղեին, Միքայէլ Առվանեանը միայն իւր հոգով ու սրաով կարող է պարձենալ ձեղ մօտ:

Այս պարզ դարձւածն ինձ այնքան գրաւեց, որ ես թոյլ տւեցի այդ մարդուն օր օրի վրայ յամատոկունութեամբ հետամուտ լինել ինձ:

Եւ նա յաղթեց իմ սիրտը: Գուցէ դա մի տեսակ հիպնօզ էր, որ, զրկելով ինձ կամքի ոյժից, նիրհեցրեց իմ բանականութիւնը: Չեմ կարող ոչ յիշել, ոչ մանաւանդ բացադիրել: Եւ ես մի օր, վերջապէս, մերժելով բոլոր ինձ հետամուտ լինողներին, որոնց թիւը սակաւ չէր, ձեռքս խոստացայ Միքայէլ Առվանեանին:

Այդ այն ժամանակն էր, երբ մայրս նոր էր մեռել և ես տակաւին սպի մէջ էի: Նա շտապեց հարսանիքի օրը նշանակել այնքան վաղ, որքան թոյլ չէր տալիս այդ սուզը: Նա ասաց:

—Դու զիսես, որ ես կառավարութեան պաշտօնեայ եմ և եկել եմ այստեղ որոշ արձակուրդով, ուշրեմն, պէտք է շտապել: Պաշտօնս թոյլ չի տալիս այդ երջանիկ օրը յետաձելու:

Պսակագրութիւնը կատարւեց: Հարսանիքի օրը նա ինձ նւիրեց երկու խաղարկու տոմսակներ: Ես այս աննշան դէպքը յիշում եմ այստեղ որոշ նպատակով: Բանն այն է, սիրելիս, որ գրանով առաջին անդամ բացւեցին իմ աչքերը Միքայէլին ճանաչելու համար, և ահա ինչպէս:

Սովորական ձետականութիւնից և այցերից յետոյ մենք ուղերձեցինք Միքայէլի պաշտօնատեղը, որ մի

Խուլ գաւառական քաղաք էր Անդրկովկասի մի անկիւնում: Այդ օրը նա պահանջեց, որ իւր նուէրն իւրան վերադարձնեմ:

—Գիտես, Մինա, —ասաց նա, —դու անփորձ ես, կարող ես այդ տոմսակները կորցնել, իսկ իմ մօտ նըրանք կըպահեն ապահով: Եթր կըհասնենք իմ պաշտօնատեղը, ես իսկոյն նրանց կըվերադարձնեմ քեզ...

Հարկաւ, ես, առանց մի վայրկեան տատանելու, հաւատացի նրան և իւր նուէրը յետ տւեցի: Բայց հասանք տեղ, շաբաթներ անցան, և նա տակաւին լուռ էր տոմսակների մասին: Մի օր ես կատակով հարցրի: Առանց շփոթուելու նա պատասխանեց.

—Ախ, սիրելիս, այդ տոմսակներն ես նուիրեցի իմ եղբայրներին:

—Ի՞նչո՞ւ:

—Որովհետեւ նրանք շատ են աշխատել, որ ես արժանանամ քո ձեռքին:

—Ուրեմն դու նրանց միջնորդութիւնն ես վարձադրել, —ասացի ես ծիծաղելով:

—Այս, եթէ կամենաս:

—Բայց չէ որ մենք առանց միջնորդների ենք ամուսնացել:

Միքայէլը ոչինչ չասաց, գրկեց ինձ, համբուրեց, և դրանով ինդիրը փակւեց: Բայց, այնուամենայնիւ, այդ հասարակ գէպքն ինձ վրայ թողեց անախորժ տպաւորութիւն: Յուսով եմ, սիրելիս, չես կարծիր, որ տոմսակների նիւթական արժեքն էր այդ անախորժութեան պատճառը: Ոչ, հազար անգամ ոչ:

Այն քաղաքը, ուր պաշտօն ունէր Միքայէլը և ուր շղափոխւել էի ես, անհամեմատ աւելի ողորմելի էր, քան իմ ծննդավայրը, որի տաղտուկները քեզ այնքան ծանօթ են: Դա իսկապէս քաղաք չէր, այլ մի

ընդարձակ աւան, որի բնակչութիւնը բաղկացած էր գլխաւորապէս կիսարարարարոս թուրքերից: Դա կովկասեան այն խղճուկ վայրերից մէկն էր, որոնց միակ օազիսը կազմում են գաւառապետն իւր օգնականներով, հաշտարար գտաւորը, ոստիկանապետը, բժիշկը և մի քանի ուսուցիչներ: Ոչ թատրոն, ոչ ժողովարան և ոչ մի որևէ հասարակական զրոսավայր, որ այնքան անհրաժեշտ են ժամանակակից մարդու համար:

Կարող ես, ուրեմն, երեակայել վիճակը մի երիտասարդ կնոջ, որ նոր էր ոտ դրել կեանքի շէմքը և որը, բացի ընտանեկանից, ունէր և արտաքին հաճոյքներ վայելու փափագ:

Այնուամենայնիւ, կար մի փոքրիկ շրջան, ուր մենք կարող էինք մեր ընդ մերթ ընկերական կեանքի մըթնողրտով շնչել: Եւ ահա Միքայէլն ինձ ծանօթացը բեց այդ շրջանի հետ: Մենք իբրև նորապսակներ և եկորներ այցելեցինք մի շաբաթ ընտանիքներ և ստացանք փոխ այցելութիւններ:

Աւազ, դրանով էլ սահմանափակւեց մեր շփումը արտաքին աշխարհի հետ: Այլևս ոչ մի երթեեկ, ոչ մի փոխադարձ հիւրնկալութիւն: Ինչո՞ւ: —Որովհետեւ Միքայէլը, մի անհասկանալի յամառութեամբ, ոչ ոքի մօտ չէր ուզում գնալ և ինձ էլ արգելում էր գնալ:

Մի օր ես կատակով ասացի:

—Գիտես, Միքայէլ, երկի, Ռօմէօն և Զիւլետատան այնքան չեն սիրել իրանց տեսակցութիւնը, որքան մենք սիրեցինք մեր մենաստանային կացութիւնը: Արդարեւ, մարդիկ կարող են կարծել, որ մենք երդւել ենք ճգնաւորի կեանք վարել:

Միքայէլը զգաց, որ ես կատակ չեմ անում, որ ես լրջօրէն տիրում եմ առան շրջանի, առանց հասկութեան:

Նա պատասխանեց.

—Աւելի լաւ է լինել ճգնաւոր, քան վարակւել ապականութեամբ:

—Ո՞րն է այդ ապականութիւնը:

—Այն վարք ու բարքերը, որ տիրում էն այս քաղաքի հասարակութեան մէջ:

—Երդօք, այդ վարք ու բարքերը առաջ էլ կային, թէ իմ գալուց յետոյ երեացին:

—Կային:

—Հապա ինչո՞ւ դու այն ժամանակ այդ հասարակութեան հետ շիւում էիր:

—Այն ժամանակ այլ էր, այժմ այլ է: Այն ժամանակ ես ամուրի էի, այժմ ամուսնացած եմ:

Կարող ես երևակայել, սիրելիս, որ ես տակաւին չըգիտէի ինչ տարբերութիւն կայ ամուրի մարդու և ամուսնացած մարդու բարոյական հայեացքների մէջ: Միքայէլը չըբացազրեց ինձ այդ: Սակայն ես երկար ժամանակ չըմնացի խաւարում: Շուտով իմ միամիտ տարակուսանքը փարատեց և իմ հոգեկան աչքերը նշանացին կեանքի առաջին աղտեղութիւնը:

Պատմեմ եղելութիւնը այնպէս, ինչպէս էր: Տեղացիների մէջ կար մի բաւական տարիքաւոր հայունի, որ ամուսնացած էր մի ուռւ այրի չինովակի հետ: Մեր այցելութեան միջոցին ես նկատեցի, որ այդ կինը մի տեսակ անհաշտ աչքով է նայում ինձ և այնքան անքաղաքավարի է, որ շարունակ Միքայէլի հետ է խօսում, ոչ միայն ինձ անուշադիր թողնելով, այլև երբեմն մէջքն ինձ դարձնելով:

Այս հանգամանքն ինձ վրայ իմաստ անախորժ տպարութիւն գործեց, և ես մի օր այդ մասին գանգատուցի մի ծանօթ տիկնոցի:

—Երեխայ էք, —գոչեց ծանօթս, խորհրդաւոր

ժպատակով, —կեանքը դեռ իւր տպեղ կողմերը ցոյց չետևել ձեզ: Երանելի հասակ:

—Ի՞նչ էք կամենում ասել, տիկին, —հարցը ես:

—Ուզում եմ ասել որ դուք չըգիտէք մի բան, որ ամբողջ քաղաքը գիտէ: Այդ կինը ձեր ամուսնու սիրուհին է եղել:

—Սիրուհի, —գոչեցի ես, սոսկալով այդ բառից, և իմ անապական սրտի խորքում զգացի մի անողորմ վէրք:

Այս, սիրելի, ես այդչափ անմեղ էի և անտեղեակ տղամարդ կոչւած էակի ապականութիւնսիրին:

Եթէ չեմ մոռացել, հէնց նոյն օրն ես իմ սրտի դանութիւնը յայտնեցի Միքայէլին: Հապարտութեան և ամօթի զգացումը թոյլ չըտեց ինձ ինդըլին մօտենալ ուղղակի: Ես նրա շուրջը պտոյտներ գործեցի:

—Ինչո՞ւ այդ հայունին երեսն այնպիսի յամառութեամբ դարձնում էր ինձնից, —հարցը ես:

—Որովհետեւ նրա երեսի վրայ կայ մի արատ:

—Բայց ես չընկատեցի այդ արատը, ես տեսայնը ամբողջ երեսը: Ասա ինձ, Միքայէլ, ո՞վ է այդ կինը:

—Թողնենք, չարժէ նրա մասին խօսել, սիրելիս: Եւ, այս ասելով, Միքայէլն ինձ գրկեց ու համբուրեց այնպիսի աւելնով, որ մի վայրկեանում իմ մէջ ոչնչացրեց չար կասկածը:

Սակայն ինձ վիճակւած էր նրա նախկին սիրունուց կըել երկրորդ, աւելի զգալի վիրաւորանք:

Թաթախման երեկոյ էր: Մենք հրաւիրւած էինք տեղական բժշկի մօտ, որի կինը մի յայտնի պրօֆեսորի և հասարակական գործչի գորստը էր: Տեղական կանաց մէջ դա միակն էր, որ ինձ վրայ գործել էր վերին աստիճանի հաճելի տպաւորութիւն: Մի խելօք, բա-

բեկիրթ, զարգացած և համակրելի էակ, որի հետ ես փափագում էի բարեկամանալ:

—Ես կը գնամ ուրախութեամբ,—ասացի ես Միքայէլին:

—Ոչ, սիրելիս, մենք այնտեղ չենք գնալ. մենք հրախրած ենք մի ուրիշ տեղ, ուր աւելի ուրախ կանցնի քեզ համար:

Եւ այդ ուրիշ տեղն ինձ վիրաւորող կնոջ խորթ գսաեր տունն էր: Ես փորձեցի հակառակել: Միքայէլը պնդեց իւր ուզածը: Ես զիջեցի:

—Գիտէք,—ասաց ինձ ամուսնուս հոմանին խօսակցութեան միջոցին, չարախինդ ժպտալով,—դուք լուսնի էք նման:

Զըգիտեմ նման էի այն ժամանակ ես լուսնի թէ արեգակի, զիտեմ, որ տգեղ չէի: Վիրաւորանքը պարզ էր և ես կին չըպիտի լինէի, որպէս զի սառնարիւն վերաբերէի դէպի նա:

Տուն վերադառնալով, ես ասացի.

—Ինչ ուզում ես արա, Միքայէլ, ես այլիս այդ կնոջ երեսը տեսնել չեմ կարող: Ես երբէք իմ արտաքինով չեմ պարձեցել, համեստութիւնը համարելով կնոջ դարդը: Բայց թոյլ տալ մի օտար կնոջ այդ տեսակ կոպիտ նկատողութիւններ, կը նշանակէ վիրաւորել նոյն իսկ քեզ: Զէ՞ որ այնքան օրիորդների մէջ դու ինձ ընտրեցիր: Հետեարար, ես պարտաւոր եմ յարգել քո ճաշակը, իսկ դու պարտաւոր ես պաշտպանել ինձ:

Իմ խօսքերն աղեցին Միքայէլի վրայ, և նա թոյլ տւեց ինձ ընդհատել ծանօթութիւնը իւր նախկին հոմանու հետ:

Եւ այսպէս, մենք բոլորովին անջատեցինք հասարակութիւնից, մեր կեանքը դարձաւ միանդա-

մայն անապատային: Մի վայրում, որ առանց այն էլ ամայի էր ինձ համար:

## II.

Մօտեցաւ մեր ամուսնութեան առաջին ամառը: Պէտք է ասել, սիրելիս, որ ամուսնուս պաշտօնաւեղը ամբողջ կովկասում յայտնի է իւր վատառողջ կլիմայով, մանաւանդ ամառը: Այնտեղ երեխն արեգակի ջերմութիւնը հանում է 50 աստիճանի, միենոյն ժամանակ, աիրում է այնպիսի խոնաւութիւն, որից մարդու սուկորներն են տամկանում: Բայց զիկաւոր չարիքը նրա միջատներն են, մանաւանդ մոծակները, որոնց խայթերը մարդու մարմինը ծածկում են վէրքերով:

Մի օր իմ մարմնի վրայ երեացին ինչ-որ բշտիկներ, չարկաւ, ես այդ վերագրեցի մոծակների խայթերին:

Աղախինս, որ եկար տարիներ էր ինչ ապրում էր այդ քաղաքում, նայեց բշտիկներին և ասաց.

—Տիրուհի, դրանք մոծակի կծոցներ չեն, ես լաւ զիտեմ:

—Հապա ինչ են,—հարցըի ես:

—Զը զիտեմ, զա ուրիշ բան է, դիմեցէք բժշկին: Դժոխային օր: Օր, որ յաւիտեան չեմ մոռանալ: Մի ամիս չանցած, մի օր ես գողացըի և այնքան վատ գացըի ինձ, որ ստիպւեցի անկողին մանել: Միքայէլը տուն վերադառնաւ և, տեսնելով ինձ անկողնում, զայրացաւ:

—Վեր կաց, —գոչեց նա:

—Բայց ես տկար եմ, —ասացի ես, զարմանալով նրա զայրոյթի վրայ:

—Դու տկար չես, քո երեակայութիւնն է տկար:

Վեր կաց, ես չեմ ուզում, որ դու անկողին մտնես:

Ես ստիպւեցի կատարել նրա պատւէրը: Զըգիւտեմ ինչ գերբնական զօրութեամբ, այդ մարդն արդէն այնքան տիրել էր իմ կամքին, որ ես անզօր էի դիմադրել նրա ցանկութիւններին: Սիրամ էի, արդեօք, նրան այն անողոք ու ջերմ սիրով, որ այնքան բռնակալ է կնոջ համար: Անտարակոյս այո, վասն զի զգում էի, որ այլ ևս կեանքն առանց նրա ոչինչ է ինձ համար: Զգում էի, որ պատրաստ եմ նրա համար զոհել ամեն ինչ, կրել ամեն տառապանք, հանգութել ամեն վիրաւորանքների մի խուլ վայրում, հեռու բարեկամներից ու մտերեմներից, հեռու հասարակութիւնից, զորկ ընկերական կեանքի բոլոր հաճոյքներից, մեն մենակ, ինչպէս ճակատագրի քըմքով լերկ ժայռի գագաթին բուսած մի ծառ:

Եւ այսօր, երբ յիշում եմ իմ կրածներն այդ մարդուց, մազերս փշաքաղում են, մարմինս սարսում է: Ես չեմ կարողանում ինքս ինձ հաշիւ տալ, մըն էր, արդեօք, այն բռնակալ ոյժը նրա մէջ, որ այնպէս գերեց իմ անկախ, ազատասէր հոգին: Ասել, որ ես մի կամազորկ էակ էի, մէկն այն խղճուկներից, որոնք միշտ ուրիշների ստէրի մէջ են պատսպարում—չեմ կարող: Բնութիւնն ինձ չէր դրկել ազատասէր ձգտումներից և իմ ծնողները ինձ չէին հալածել այնպէս, որ այդ ձգտումները մեռցնէին իմ մէջ, ինչպէս անում են շատ ծնողներ:

Ահ, չը գիտեմ, սիրելիս, և չեմ ուզում երկարացնել: Կասեմ միայն, որ ես չըհպատակւեցի Միքայէլին, այլ ստրկացայ նրա առջև, եւ իմ հուռթիւնը հաստ այն ողորմելի աստիճանին, որ վերջիվերջոյ սկսեց իրան իսկ ճանձրացնել: Այսպէս, մի օր նա, երբ ինչոր տնտեսական սխալիս համար ինձ յանդիմանելիս տե-

սաւ, որ ես ինձ չեմ արդարացնում, ասաց.

—Գիտես, Մինա, դու կարող ես ինձ խելազարեցնել քո հեղութեամբ: Զէ՞ որ դու մարդ ես, ինչո՞ւ չես պաշտպանում քեզ:

Ես նրան կրկնեցի մեր հեղինակներից մէկի խօսքը.

—Ամուսնական կեանքը միահեծած իշխանութիւն է մէկի և հյու հպատակութիւն միւսի համար: Ես բարւոր եմ համարում իշխանի, քան իշխան:

Իմ հեզ պատասխանը բնաւ չըմելմացրեց նրան: Ըսդհակառակը, նա «իշխան» բառն ըմբռնեց իւր կոպիտ նիւթական իմաստով և աւելի խստացրեց իւր բռնութիւնը, որն ես այնպիսի ինքնայօժարութեամբ ընդունել էի յանուն այն իդէալի, որ իմ վառ երևակայութիւնը յօրինել էր ընտանեկան երջանկութեան մասին:

Նա ինձ յանդիմանում էր ու նախատում իւրաքանչիւր սխալիս համար, որ առաջանում էր իմ երիտասարդական անփորձութիւնից: Մերթ կերակրի աղն էր պակաս, մերթ թէյը ժամանակին չէր պատրաստւել, մերթ սփոռցներն ու անձեռոցիկներն էին շուտ մաշտում շատ լւացւելուց, մերթ ուշ էի գրպթնում, վաղ քնում—այս բոլոր աննշան բաները մի մի քրէական յանցանքներ էին իմ կողմից, որոնց համար ես անընդհատ կրում էի ստրկի հալածանքներ:

Եւ չէի բողոքում, չէի տրտնջում անզամ: Ես խորհում էի այսպէս. նա կեանքի յարատե զնկանքներից զառնացած մի մարդ է: Տասնուերեք տարեկան հասակում հօրից զրկւելով, մնացել է անտէր, անպաշտպան, կրել է հազար ու մի նիւթական և բարոյական տառապանքներ: Ի՞նչ իրաւոնքով պահանջել առանձին մի քնքշութիւն մի մարդուց, որ ինքը բնաւ չի հանդիպել քնքշութեան: Թող շարունակէ հալածել.

և կաշխատիմ իմ համբերութեամբ, իմ հեղութեամբ, իմ մեղմութեամբ մեղմացնել և կրթել նրա կողտ բնաւորութիւնը:

Աւագ, որքան սխալում էի ես, որքան մոլորւած էի, որ չըգիտէի, թէ ձիւնից սառած մարդուն կրակով չեն տաքացնում, այլ նոյն ձիւնով: Որքան տհաս էի, որ չըգիտէի, թէ նա կայ և կրմնայ նոյնը մինչեւ վերջը—անտաշ, մանրակրկիտ, դիւրագրգիռ, ժլատ և ինքնահաւան:

Ամառը մենք կարճ ժամանակով գնացինք մեռ ծննդավայրը: Այստեղ ես զգացի որոշ թեթևութիւն իմ մտերիմների միջավայրում: Մոռացայ իմ կրած անախորժութիւնները և նորից ժպտացի կեանքին, նորից թւաց ինձ, թէ նա էլ ժպտում է ինձ: Բայց երբ յիշում էի առաջիկայ աշունը, երբ մտածում էի իմ վերադարձի մասին, դարձեալ ինձ պաշարում էին մոռայլ մտքեր:

Ես վճռեցի մենակ չըվերադառնող Միքայէլի պաշտօնավայրը և ինչդրեցի նրան, որ իւր մօրն էլ տեղափոխէ այստեղ: Յոյս ունէի, որ այդ կինը կարող էր մեղմացնել իւր կոպիտ՝ որդու վերաբերմունքը դէպի ինձ գէթ այնչափ, որչափ կարելի է մեղմացնել:

Սուկալի՛ մոլորութիւն, որ յաւիտեան չըպիտի մոռանամ: Ոչ միայն իմ յոյսը չարդարացաւ, այլև պատահեց բոլորովին հակառակը:

Հէնց իւր գալու առաջին օրից պառաւ մայրը կուրօրէն բռնեց իւր որդու կողմը: Դա մի կարճահասակ, հաստամարմին կին էր, մեծ քթով, մեծ բերանով, մէջքը բաւական ծուռ: Նրա բերանում ոչ մի ատամ չըկար, ինչպէս և փոքրիկ աչքերի մէջ բարութեան նշոյլ: Իւր պատմելով մի անգամ ամուսինը նրա բերանին այնպէս էր զարկել, որ բոլոր ատամները ջարդել էին: Իդէպս,

Միքայէլը, մի քիչ ժամանակ անցած, նրա համար առուեստական ատամներ շինել տւեց, երկի, որպէս դինա աւելի ամուր խածնէ իմ ինքնասիրութիւնն ու պատիւը:

Նոյն միջոցներին մեղ մօտ հիւր եկաւ և Միքայէլի փոքր եղբայրը: Միջին հասակով, իւր մօր պէս կուզ մի արարած էր դա, որի միակ սկզբունքն էր լաւ ուտել, լաւ քնել և աչքերը շարունակ անկել մեր հարստութեան վրայ:

Ստեղծեց մի տեսակ գաշնակցութիւն երեքի մէջ մէկի դէմ: Մայրը հովանաւորում էր որդուն, եղբայրը քծնում էր եղբօրը, և ես էի մենակնրանց մէջ անտէր, անպաշտպան, որպէս փշերի մէջ բուսած մի ծաղիկ: Աւելին կասեմ: Իմ ընտանեկան կեանքում ես մի անլեզու ստրուկ էի, զուրկ բոլոր իրաւունքներից: Պառաւը շարունակ լարում էր Միքայէլին իմ դէմ որպէս մի չար ոգի, որին բարձրագոյն հաճոյք էին պատճառում իմ հոգեկան տւայտանքները: Ամեն ինչ իւր որդու համար և ոչինչ ինձ համար-այս էր նրա միակ նշանաբանը, յանուն որի նրա սիրաը դարձել էր ապառաժ իմ վերաբերմամբ:

Եւ ես նկատումէի, որ մօր վարմունքը դէպի ինձ թևեր է տալիս որդուն և մի տեսակ շոյում է նրա եսը: Սկսեցի, վերջապէս, զգալ որ այնտեղ չեմ ընկել, ուր երեակայումէի: Զքացաւ պատանեկան վառ երեակայութեանս յօրինած ընտանեկան իդիլիան:

Մուայլւեցին վարդագոյն երազները կեանքը փոխարինեց մի անգոյն գոյութեամբ, որ կարող էի համարել բուսական, եթէ չը լինէր այնքան գաժան: Զգացի, որ ճակատագրի անոքոք ձեռքը կորդել է ինձ ծնողներիս փաղաքուշ գոգից և գամել մի ցուրտ ժայռի, ուր ես դատապարտւած եմ յաւիտեանական տւայրական անդամութեան համար: ԴՐԱԿԱ

տանքների: Զգացի, որ իմ ամուսնու համար տենչալին ոչ իմ երիտասարդութիւնն է եղել ոչ իմ գեղեցկութիւնը, ոչ մահաւանդ իմ հոգին ու սիրաը, այլ իմ օժիտը: Զգացի, որ բիրդ գաւառացին մնացել է նոյնը, ինչ որ եղել է ի ծննդենէ, որ ոչ բարձր ուսումը, ոչ հնգամեայ մայրաքաղաքեան կենցաղը և ոչ միջավայրը նրա հոգեկան աշխարհի վրայ բարերար ներգործութիւն չեն ունեցել:

Ես չունէի իրաւունք ոչ միայն առանց իմ ամուսնու, այլև առանց նրա մօր ցանկութեան անից դուքս գալու: Չունէի իրաւունք անգամ իմ կամքով քննելու, ուտելու, խօսելու, զրօննելու:

Պատմեմ մի անօրինակ զէպք, որ երբէք չեմ մոռանալ: Դա բոլոր իմ գանգատներից աւելի գունեղ կարող է պատկերացնել իմ կացութիւնը:

Առաւօտ էր: Թէյ էինք խմում: Թւում էր, որ ամեն ինչ խաղաղ է, ընտանեկան խոռվութեան և ոչ մի պատճառ չըկայ: Բայց ոչ, յանկարծ երկինքը մթագնեց, բարձրացաւ անսպասելի փոթորիկ: Միքայէլը գունատւեց, կատաղեց և, ձեռն ուժգին սեղանին զարկելով, գոռաց. «Անառակ»:

Ես ցնցեցի և ապշած նայեցի նրա կատաղի աշքերին:

—Անառակ, —կըկնեց նա, —այս ինչ է: Նայիր: Նա թէյի բաժակը դրեց իմ առջև և բռունցքները սեղմեց:

Ես նայեցի բաժակին: Թէյի մակերեսյթը ծածկած էր թաճը իւղով: Ի՞նչպէս—չը կարողացայ իմանալ: Թէյը ես էի ածել, կանխապէս բաժակը ինսամքով լւանալով ու սրբելով մաքուր անձեռոցիկով:

—Այդ ինչ է, —գոռաց նա դարձեալ:

—Չը գիտեմ, զարմանալի է:

—Զարմանալի չէ, դու ուզում ես ինձ թունաւորել: Ասա, ի՞նչ թոյն ես ածել այդ բաժակի մէջ:

Պահ մի արինս սառաւ երակներիս մեջ, լեզուս կաշկանդւեց: Ես թունաւորժ, ես մարդասպան: Այն էլ ում սպանողը: —Մի մարդու, որին սիրում էի կամ գոնէ երևակայում էի, որ սիրում եմ:

Ես ոչինչ չասացի: Բայց վայրկենաբար իմ միտքը լուսաւորեց մի կասկած: Տեսարանին ներկայ էր Միքայէլի մայրը: Գլուխը կրծքին թեքած, լուռ լսում էր որդու զարհուրելի մեղադրանքը:

—Ինչո՞ւ չէք պաշտպանում ինձ,—դարձայ ես նրան, —չէ՞ որ ես բաժակը լւացայ և թէյ ածեցի ձեր ներկայութեամբ:

—Իմ գործը չէ, —ասաց նա, շփոթւեց և լսեց:

Գաղտնիքը պարզւեց միայն հետեհալ օրը: Օգտելով իմ վայրկենական բացակայութիւնից, պառաւը Միքայէլի բաժակի մէջ ածել էլ մի գդալ ձիթաիւդ:

Պատճառը, կը հարցնես, սիրելիս: Պատճառը նոյնքան կոպիտ, ողքան և միջոցը: Պառաւն ամեն կերպ աշխատում էր իմ վարկը կոտրել իւր որդու աչքում: Նա վախենում էր մի գուցէ Միքայէլն ինձնով յափշտակելով, մոռանայ իրան և իւր միւս որդիներին: Նա կարծում էր, որ եթէ այդպէս լինի, իրանք կը մնան անպաշտպան, այն ինչ՝ նրա և իւր միւս որդիների միակ սկզբունքն էր՝ կարելոյն չափ շատ շահագործել Միքայէլին:

Իրեւ նահապետական գերդաստանի զաւակ, Միքայէլն անկառակած ունէր իրաւունք, բացի սիրելուց, և հպատակւել իւր մօրը: Ես այսքանը հասկանալու չափ գիտակցութիւն ունէի և չէի դիմագրում: Բայց յանուն որդիական խոնարհութեան նա չէր տատանւում յաճախ

ինձ ստորացնել այդ գուեհիկ կնոջ առջև—այս էր վերաւորականը:

Եւ ցաւալին այն է, որ իմ կրած հալածանքները ունեին աւելի նիւթական, քան բարոյական հիմք: Դա Միքայէլի անսահման ժլատութիւնն էր:

Մի առաւոտ, չըգիտեմ ինչպէս, իմ թէյի բաժակի մէջ ընկաւ մի որդ: Ես վերցրի բաժակը, նայեցի, ցընցւեցի: Բաժակն ընկաւ ձեռքիցս յատակի վրայ և փշուեց:

—Ի՞նչ արիր, յիմար,—գոչեց Միքայէլը զայրացած, ձեռն ամուր սեղանին զարկելով,—այդ բաժակն ինձ համար աւելի թանգ էր, քան դու:

—Հանգիստ կաց, —ասացի ես, կարողանալով զըսպել զայրոյթս, —ես մէկի փոխարէն կըգնեմ տասը:

—Տեսէք, տեսէք, —մէջ մտաւ պառաւը, —չի ամաչում, գոռողանում է իւր օժիտով:

—Տիկին, կարծեմ, ես երբէք ձեզ մօտ չեմ պարծեցել իմ օժիտով: Թանգն ինձ համար հարստութիւնը չէ, այլ իմ ամուսնու հանգստութիւնը և մանաւանդ՝ նրա սէրը դէպի ինձ, եթէ միայն կայ սէր:

Իմ խօսքերը մեղմացրին Միքայէլին: Նա լոեց:

### III.

Ես ինձ զգում էի մենակ, անտէր, անպաշտպան այնքան, որ գիշերային խաւարն անզամ սարսուռ էր պատճառում ինձ: Երեակայիր, որ ես չէի կարողանում մթութեան մէջ քնել, ուստի լամպարս միշտ վառ էի թողնում սեղանի վրայ:

Այս հասարակ բանն անդամ բարոյական յանցանք էր Միքայէլի մօր, ժլատութեան այդ օրինակելի տիւպարի աչքում: Հազիւ աչքերս փակում էի, նա ծածուկ

մտնում էր սենեակս և լամպարի պատրոյգն իջեցնում, որպէս զի քիչ նաւթ վառւի: Առաջանում էր մուկս, որից ամեն առաւոտ զարթնում էի գլխացաւով:

Այդ մարդկանց համար անհասկանալի էր զգացմունքի ամեն մի նրբութիւն: Իմ երկիւղը խաւարից, իմ գարշանքը մկներից ու ոռնչտներից, իմ ահը մողէսներից, իմ սարսափը կարիճներից—այս բոլորը նրանց համար հարստի աղջկայ նազուբազներ էին: Ես մեղաւոր էի, որ իրանց պէս չէի մնւել:

Ես ամեն անգամ ճշում էի երկիւղից մեր սենեակներում մողէս տեսնելիս, իսկ Միքայէլը բռնում էր ձեռքով ամեն մի սողուն և դուրս շպրտում այնպէս սամարիւն, ինչպէս մի քար:

Իմ կացութիւնը քանի զնում, այնքան դժւարանում էր: Խորթ միջավայրում ես ինձ զգում էի իբրև մի անկոչ հիւր: Բարւոք չէ, արդեօք, բաժանել այդ մարդուց, մտածում էի ես յաճախ: Եթէ ես, մենակ մնալով, երջանիկ չեմ լինիլ, գոնէ հանգիստ կըլինիմ...

Ամառայ սկզբին ես պատրաստեցի զնալ դարձեալ իմ ծննդավայրը մերձաւորներիս տեսնելու փափառվ: Դա ինձ համար կատարեալ մի տօն էր: Ուղեւորւելուց մի քանի օր առաջ Միքայէլը, չեմ յիշում ինչ պատճառով, դարձեալ զայրացաւ և, ըստ իւր սովորութեան, սկսեց գոռալ:

—Զուր ես կատաղում, —ասացի ես անվրդով, —ահաւասիկ ես գնում եմ ծնողներիս մօտ և հազիւ թէ վերապառնամ:

Հստ երեսյթին նա չէր սպասում իմ կողմից մի այդպիսի մտադրութեան: Նրա դէմքը գունատեց, շրթունքները սկսեցին գողալ:

—Ի՞նչ, —գոչեց—նա, —դու ուզում ես բաժանւել ինձնից:

—Այս,—պատասխանեցի ես վճռաբար, թէս, իսուս-  
տովանւում եմ, ինքս էլ չէի հաւատում իմ ասածին:

—Աա, հասկանալի է, դու ուզում ես ազատ լի-  
նել, որպէս զի...

Ես զգացի, որ նա ուզում է ինձ վիրաւորել, ուս-  
տի շտապեցի ընդհատել նրա խօսքը.

—Մի՞ համարձակւիր, առանց այն էլ դու ինձ  
շատ ես վիրաւորել: Այս, ես չէի կամենալ վերադառ-  
նալ այս դժոխքը:

Նա մի՞ քանի վայրկեան խորհեց և յետոյ, աչքե-  
րը աչքերիս յառելով, ասաց ամենապրական եղանակով:

—Ես քեզ չեմ թոյլ տալ ինձնից բաժանել:

Ես գնացի իմ ծննդավայրը: Այստեղ ես հանգի-  
պեցի իմ երաժշտութեան վարժուհուն: Յիշեցի նրա և  
իւր ամուսնու խօսքերը հարսանիքիցս մի քանի օր  
առաջ.

—Օրիորդ, մենք ձեզ չենք կարող շնորհաւորել:

—Ինչու, —հարցըի ես, զարմանալով:

—Որովհեաև դուք այդ մարդու հետ բաղդաւոր  
լինել չեք կարող:

—Պատճառը:

—Նա աղքատ է, դուք հարուստ: Այս մէկ:

—Դա քիչ է:

—Ոչ, շատ է, օրիորդ:

—Դիցուք: Շարունակեցէք:

—Երկրորդ, այլ է ձեր կրթութիւնը ու ձաշակը,  
մյլ է նրանը:

—Յետո՞յ:

—Այլ է ձեր բնոյթը, այլ է նրանը:

—Օրինակ:

—Դուք հեղ էք, նա ոչ, դուք նրբազգաց էք, նա

բիրդ, դուք ներողամիտ էք, նա կրքուտ, դուք ան-  
յիշաչար էք, նա քինախնդիր:

—Կոմպլիմաններ մի՞ արէք ինձ, տիկին, —ասացի  
ես շփոթւելով, —իմ արժանաւորութիւններն այդքան  
մեծ չեն: Ինձ թւում է նոյն իսկ, որ Միքայէլն ինձնից  
անհամեմատ բարձր է:

—Օրիորդ, —գոչեց վարժուհիս, —պատիւ է բերում  
ձեղ ձեր համեստութիւնը, բայց թոյլ տւէք ինձ մնալ  
իմ համոզմունքի մէջ:

—Ենթադրենք մի վայրկեան, թէ իմ ապագայ  
ամուսինն ու ես հակոտնեաններ ենք: Շօպէնհառուէրն  
ասում է, թէ կօնտրաստներն են միմեանց սիրում ու  
միանում:

—Օրիորդ, պարագոքները գեղեցիկ են գրքերի  
մէջ, կեանքն ուրիշ պատկերներ է տալիս մեզ: Դուք  
այդ մարդու հետ բաղդաւոր լինել չէք կարող, նա այն  
չէ, ինչ որ կարծում էք:

Ի՞նչ գիտէի, որ այդ արտաքուստ քաղաքավարի,  
բարի ու առաքինի մարդու հոգին այնքան կոպիտ է,  
այնքան աղաւազւած կեանքի դաժան պայմաններից  
թէ իրնէ: Զէ որ նա ամեն կերպ աշխատում էք հաս-  
կացնել ինձ, որ ես և միմիայն ես եմ նրան գրաւողը  
և ոչ իմ օժիտը, իմ շրջանը, իմ հօր հարստութիւնը:  
Նա ասում էք.

—Օրիորդ, եթէ դուք լինէիք վերջին աղքատի  
դուստր, ես զարձեալ ձեղ կընտրէի այնքան հարսնա-  
ցուների մէջ:

Թոյլ տուր ինձ, սիրելիս, առաջ բերել հարսնացու  
միջոցիս նրանից ստացած մի նամակ:

«Եթէ կայ մի բան, որով կարող եմ պարծենալ  
դա իմ խորին ատելութիւնն է դէպի կեղծիքը, դա իմ  
բարոյական մաքրութիւնն է: Նշանսելուցս առաջ ես

անքուն և անհամսպիստ զիշերներ եմ անցկացրել մտածելով քո մասին և այնպէս եմ վճռել կեանքս. նւերել ըեղ. Վկայ են ամենքը, որոնք զիտեն իմ հպարտութիւնը, որ ոչ մի գումարով ես իմ ազատութիւնն ու կամքը չեմ վաճառիլ: Ինչ որ անումեմ, անումեմ սրտիս բղխածից և մտքիս ազատ թելադրանքից, առանց յետին հաշիւների: Ինչու վնարեցի քեզ հարիւրաւոր աղջիկների մէջ: Քո հարստութեան համար: Օօ, ոչ, բիւր անգամ ոչ: Ինձ յափշտակողը, ինձ քո ոտների տակ ձգողը քո անձնական արժանիքներն են և միմիայն նրանք: Շատերն էին փափակում ինձ զնել իրանց ոսկով, բայց չը վաճառեցի ինձ: Պիտի աշխատես ճանաչել ինձ, որպէսզի համոզես, որ երեմ սև մորթու տակ ձիւնի նման ճերմակ հոգի է թագնւած և իմ մէջ եռումն բուռն զգացումներ: Քեզնից է կախւած կամ մեռցնել այդ զգացումներն և խորտակել իմ կեանքը կամ միշտ վառ պահել նրանց և պարզենել ինձ յաւիտենական երջանկութիւն: Վկայ եմ կանչում իմ բոլոր սրբութիւնները, այսօրսանից ես այլեւս ինձ հնամար չիւ ապրելու, այլ ըեզ եւ միմիայն ըեզ համար:

Քեզ եմ հարցնում, սիրելիս, ո՞ր մի զեռահաս օրիորդի սիրտը չէր բարախիլ ուժգին, ստանալով այդպիսի ջերմ խոսառվանութիւն մի տղամարդից թէ կուզ այդ տղամարդը գեղեցկութեան տիպար չըլիներ: Նա, որ այնքան խելօք, այնքան զարգացած, այնքան հոգեպէս կորովի է թւում ինձ, այսուհետեւ պիտի ապրէ ինձ և միմիայն ինձ համար:

Ի՞նչպէս չըյափշտակւել այդպիսի մի երջանիկ հեռանկարով և ի՞նչպէս մնալ անտարբեր դէպի մի այդպիսի վառ սէր: Թող, ուրեմն, այդպէս լինի. նա ինձ համար, ես նրա համար: Մենք փոխադարձ սիրոյ

շղթաներով կըմիացնենք երկու կեանք և կըկազմենք մի ամբողջ երջանկութիւն: Եւ ես ամուսնութեանս առաջին օրից իսկ վճռեցի լիովին անձնատուր լինել Միքայէլի կամքին: Առաջին տարին իմ ստրկութիւնն ինձ համար այնքան էր հաճէլի, այնքան անուշ, այնքան անհրաժեշտ, որ երբ ես պիտի ժամանակաւոր բաժանէի Միքայէլից ծննդավայրս գնալու և հօրս տեսնելու համար, արտասուքը խեղում էր ինձ: Երբ գնացքը հեռացաւ կայարանից, ես երկար ժամանակ հեկեկումէի վագոնում երեխայի պէս:

Մի օր, երբ Միքայէլի պահարանից ուզումէի մի գիրք վերցնել ձեռքս ընկան մի քանի նամակներ: Դու գիտես, սիրելիս, թէ որքան մենք կանայքս հետաքրքիր ենք մեր ամուսինների թղթակցութիւնների վերաբերմամբ: Կարձ ասած, այդ նամակները կարգացի ծայրէ իծայր: Գրւած էին նրանք Միքայէլի եղբայրների և մօր կողմից: Աստուած մի, որքան քննում, որքան լավանութիւն կային այդ կոպիտ ձեռներով գրւած անգրագէտ նամակների մէջ: Իւրաքանչիւրը նրանցից մի մի մուրացկանի աղերս էր:

Կասկածելու այլ ևս ոչ մի կէտ չը կար. Միքայէլն ինձ հետ ամուսնացել էր իւր եղբայրներին ու մօրը նիւթապէս ապահովելու նպատակով:

Ահա ինչպէս էր սկսում փոքր եղբօր մի նամակը.

«Եղբայր, քիչ ձանձրացրու ինձ քո պահանջներով: Ես զիտեմ, որ կարիք շատ ունիք բայց չը կարելի միանգամից ծանրաբեռնել մարդկանց, հարկաւոր է զգոյշ և կամաց կամաց խուզել, որ շատ էլ զգալի չը լինի խուզւողի համար և այլն և այլն:

Ես զզւանքով դէն շարտեցի այդ թղթերը, որ մի ստորացումն էին մարդկային արժանիքի:

Այդ մոայլ օրերին հայրս մահամերձ էր: Ես տառապում էի, որ չեմ գտնուում նրա մահճակալի քով և իմ որդիական գուրզուրանքով չեմ թեթեւացնում նրա վերջին տանջանքները:

Մի սղբալի առաւոտ հեռագիրը գուժեց նրա մահը: Ես զգացի խղմի զարնուրելի խայթ, արտասուլը քարացաւ իմ աչքերում: Թւաց ինձ, որ գործել եմ մի ծանր յանցանք: Շտապեցի ճանապարհի պատրաստութիւն տեսնել որպէս զի գոնէ թաղմանը ներկայ լինիմ: Բայց Միքայէլի զաժանութիւնն այստեղ ես կանգ չառաւ իմ վշտի առջև: Նա ինձ թոյլ չըտեց գնալ: Առաջին անգամ այդ օրն ես չլկարողացայ զսպել ինձ և արտայայտեցի իմ զայրոյթը, որի հետևանքն եղաւ ընտանեկան մի նոր փոթորիկ:

Ամիսներ անցան մինչև որ Միքայէլը համաձայնւեց թոյլ տալ ինձ ծննդավայրս զնալու: Տիսուր և մոայլ վերադարձ, հայրս չըկար, մեծ եղբայրս հոգեպէս հիւանդացել էր: Շուտով կինը տարաւ նրան արտասահման:

Մնացինք ծնողներիս տանն ես ու կրտսեր եղբայրս, որ գեռ գիմնազիօնի աշակերտ էր:

Միքայէլը թողեց իւր պաշտօնը և տեղափոխեց... Նա նպատակ ունէր հօրս գործերն իւր ձեռքն առնելու, և հասաւ իւր նպատակին: Եւ ոչ ոք չընդիմացաւ նրան:

Մենք վճռեցինք հաստատել հօրս ամայի տանը, բայց Միքայէլի խորամանկ մայրը հակառակեց: Պարզ էր, որ նա չէր ուզում, որ հեռու լինիմ իւր ձիբաններից: Եւ ստիպւեցի ընկնել դարձեալ այն շրջանը, որ այժմ ոչ միայն խորթ, այլև տաելի էր ինձ համար:

Կշտամբիր ինձ, սիրելիս, որքան կամենաս, ունիս իրաւունք, բայց չեմ թագնիլ իմ թուրութիւնը:

Զէ որ ես վճռել էի Միքայէլից բաժանւել: Եւ ահա ես չունեցայ արիութիւն կտրել ամեն մի կապ զազրելի դարձած միջավայրի հետ, որի նկաւած մթնոլորտն այլ ևս խեղդումէր ինձ: Չունեցայ, որովհետեւ հասարակական կարծիք կոչւած բռնակալը ստրկացրել էր իմ կամքը:

Ամեն ինչ, ամեն ինչ ատելի էր ինձ համար այդ շրջանում, և նրա ասելութիւնն ու սէրը, և նրա հոյանքներն ու օրհնութիւնը: Ես տառապում էի հոգով, չըգտնելով շուրջն ոչ մի միսիթարական երկոյթ: Կեանքն ինձ թւում էր մի անտանելի լուծ, որից ազատելու յանցաւոր միտքն էի երբեմն փայփայում: Կարող ես երեսակայել իմ մենութեան աստիճանը, եթէ ասեմ, որ միակ տանելի անձն այդ տան մէջ հօրս վաղեմի ծառան էր, որ այժմ մեզ մօտ խոհարար էր: Դժբախտարար, նա էլ շուտով թողեց իւր պաշտօնը, ասելով Միքայէլի մօրը.

— Ես անկարող եմ ծառայել ձեզ նման մարդկանց:

#### IV.

Ես հարստանարւում էի կատարելապես:

Սկսւել էր մի այնպիսի մուրացկանութիւն Միքայէլի մօր և եղբայրների կողմից, որ ես զգում էի ինձ մեծ ճանապարհի վրայ աւաղակների ձեռքն ընկած մի ճամբորգի վիճակում: Մերժել չէի կարող, որովհետեւ մեր գործերի կառավարիչը Միքայէլն էր: Մի օր նա իւր եղբօրը տւեց մի կլոր դումար հօրս դրամարկղից իրը թէ թղթի առևտուր սկսելու համար:

Առեառւը չըսկաւեց, գումարը չքացաւ: Մի ուրիշ անգամ սկսեցին ուրիշ առևտուր: Նոյն հետեւանքը: Ես, որ զրամական հաշիւների մէջ այնքան անփորձ էի ու դիրքահաւասն, ես նոյնիսկ, մի օր, քն-

նելով նրանց մատեանները, գտայ մի շարք եղծումներ...  
Բայց ի՞նչ էին նիւթական զրկանքներս բարոյականի համեմատ: Ես պատրաստ էի զոհել իմ ամբողջ կարողութիւնը, միայն թէ ունենայի հոգեկան անդորրութիւն: Աւաղ, նա չը կար:

Իմ ճնշդավայրում, իմ բազմաթիւ ազգականների ու ծանօթների շրջանում ես հասարակութիւնից անջատւած էի նոյնչափ, որչափ օտար քաղաքում, ուր ես այնքան տառապել էի մենութիւնից:

Եւ այդ վիճակում Միքայէլի բռնակալութեանը միացաւ և՛ խանդի զգացումը: Նա խանդում էր ինձ ամենքի վերաբերմամբ, և՛ ծանօթի, և՛ անծանօթի, և՛ երիտասարդի, և՛ ծերի, և՛ գեղեցկի, և՛ տգեղի: Նա ինձ թոյլ չէր տալիս ոչ մի տեղ գնալ ու ոչ միայն մենակ, այլ և իւր հետ:

Ցիշում եմ հետեւեալ դէպքը: Մենք հրաւիրւած էինք ճաշի ազգականներից մէկի մօտ: Միքայէլը խօսք տւեց գնալու և ինձ էլ տանելու: Ժամանակից մի փոքր առաջ ես հագնւեցի և սպասեցի նրան: Նա եկաւ և, ինձ տեսնելով զուգւած, կատաղեց առանց ու է պատճառի: Կարծես, մի մեծ յանցանք էի գործել:

Մենք չը գնացինք ճաշի: Ցետոյ իմացայ Միքայէլի կատաղութեան պատճառը, ճաշին հրաւիրւած է եղել մի ինչ-որ եկլոր երիտասարդ, որին չէի ճանաչում և որի անունն անգամ լսած չէի մինչև այդ օրը:

1896 թւականի գարունն էր, Թագաւոր Կայսեր թագաւորութեան օրը: Ամբողջ քաղաքը զւարձանում էր այգիներում ու փողոցներում:

— Գնանք այգի, — դարձայ ես Միքայէլն:

— Անկարելի է:

— Ինչո՞ւ:

— Մայրս մենակ կը մնայ տանը և կը տիրի:

— Թող նա էլ մեզ հետ գայ:  
— Նա ծեր է, քայլել չի կարող:  
— Կառքով կը զբօնենք:  
— Թանգ կարժենայ:  
— Ես կը վճարեմ:  
— Այդ միւնոյնն է:

Եւ այսպէս, ամեն մի արգելքի համար որևէ պատրուակ! Այն ինչ՝ ինքը գնում էր ամեն տեղ, ուր կամենում էր և ամեն ժամանակ, երբ ցանկանում էր:

Բայց ես տանն էլ ազատ չէի: Այնտեղ Դամոկլեան թրի պէս կախւած էր իմ զլիսին պառաւն իւր անվերջ հակողութեամբ և անընդհատ կշտամբանքներով:

Չորս տարի էր անցել իմ ամուսնութիւնից, օժիտիս հազստների ձեզ վաղուց էր մօդայից գուրռ եկել, հարկաւոր էր նորերը կարել տալ: Միքայէլը թոյլ չը տւեց: Ես փորձեցի գոնէ հին հազուստներիս ձեզ փոխել տալ: Այդ էլ թոյլ չը տւեց, ասելով.

— Կարող են փչացնել այդ թանգագին կտորները: Բայց և այնպէս, բարեհանեց թոյլ տալ մի ձեռք զգեստ պատփիրելու:

Ծանօթներս կարծումէին, որ ժլատն ես եմ, իսկ ես, յիմար ինքնասիրութիւնից զրդւած, չէի հերքում, չըկամենալով Միքայէլի վարկը նսեմացնել:

Նա ինքը հագնւում էր շատ համեստ:

— Պէտք է ինայողութիւն անենք, որպէս զի մեր ծերութեան համար մի բան յետաձգենք, — ասում էր նա յաճախ:

Կարծես, հայրս քիչ էր յետաձգել ինձ համար:

Մի օր Միքայէլը տարաւ շուգայ և ինչ-որ իսանութպանի վաճառեց եղբօրս ինձ ընձայած թաւշեայ դերիացուն:

Պառաւը հրճւում էր որդու տնտեսութեամբ, մասնաւնդ նրա խստութիւններով իմ վերաբերմամբ։

Մի օր ևս լրջօրէն պահանջեցի Միքայէլից բաժանւել իւր մօրից ու եղբայրներից։ Հակառակ սպասածիս, նա համաձայնւեց։ Մենք գնեցինք մի տուն, որ պահանջում էր մի քանի վերանորոգումներ։ Որոշեցինք գնալ առ Ժամանակ Թիֆլիս։

Երբ վերադարձանք, զգացի, որ թակարդ եմ ընկել։ Երևակայիր, մեր սեպհական տունը գրաւել էին Միքայէլի մայրն ու եղբայրները։ Այդ մարդկանց սրիկայութիւնը սահման չունէր։

—Մարդ, —գոչեցի ևս մինչև հոգոյս խորքը վըրդովւած, —չէ՞ որ այս տունը գնեցինք միայն մեզ համար։

Միքայէլը չարախինդ ժպտաց և ամենայն սառնութեամբ պատասխաննեց։

—Ոչ, սիրելիս, այս տունը ևս նախրել եմ մօրս։

—Բայց ինչո՞ւ, ո՞ր իրաւունքով։

—Հարազատ որդու իրաւունքով, որ պարտաւոր է կատարել իւր որդիկան պարոքը։ Ես մօրս խոստացել էի մի տուն և ահա ուրախ եմ, որ, վերջապէս, կարողացայ խոստումս կատարել։

—Իմ փողերո՞վ։

—Ոչ, մեր փողերով, շեշտեց նա, որովհետև մեր մէջ չըկայ իմն ու քոնը, մեր կարողութիւնն անբաժան է։

—Այս ժամանակ թոյլ տուր ինձ հեռանալ այս տնից, ես անզօր եմ քո մօր ու եղբայրների հետ մի յարկի տակ ապրել։

—Դու ոչ մի տեղ չես հեռանալ։ Դու կապը ես այնտեղ, ուր ես եմ ապրում և այնպէս, ինչպէս ես եմ կամենում։ Այս են պահանջում եմ որդիկան պարտականութիւնը և ամուսնական իրաւունքը։ Այս են

պահանջում հասարակական կարծիքը և մեր հայրերի ու նախահայրերի սրբազն աւանդութիւնները...

Ես անիծեցի և այդ որդիկան պարտականութիւնը, և այդ ամուսնական իրաւունքը, և հասրակական կարծիքը և այդ հնամաշ աւանդութիւնները, բոլոր, բոլոր, բոլոր, ինչի պատճառով տառապում էր իմ ծաղիկ կեանքը։

Այս, սիրելիս, գիտեմ, որ քեզ համար ձանձրալի է այս մանր մունր դէպքերի նկարագրութիւնը, բայց իմ կեանքում նրանք ահազին դեր են խաղացել և եթէ այսօր իմ հոգին աղաւազւել ու սիրաց քայքայւել է, պատճառը հէնց նրանք են։ Ինչ ուզումն թող ասեն վիլսոփիանները, մեր կեանքը ուրիշ ոչինչ է եթէ ոչ մանր մունր դէպքերի և զիաւածների մի անգերջ շղթայ։ Ես տանշում էի այս մտքից, որ իմ երևակայած երջանիկ ամուսնական կեանքը փոխւել էր հէնց այդ տեսակ աննշան զիաւածների, որ այս մարդը, որին իդէալական էի երազել, ուրիշ ոչինչ է եթէ ոչ մի շատ առօրեայ, պոօզաիկ արարած։ Զէ որ քանի գեռ ամուսնացած չէր, քանի նա գեռ հետամուտ էր ինձ, բարձր իդէալների և վիհ գաղափարների անունով էր երդում և նրանց հոգով շնչում։ Զէ որ նրա համար ամբողջ տիեզերքում չնկար աւելի թանգ էակ, քան ես։ Ուր մնացին այն սքանչելի խօսքերը, ուր մնաց «սև մորթի տակ թագնւած պայծառ հոգին»։

Ես ինձ զգում էի կատարելապէս պաշարւած թըշնապմիներով։ Իմ դէմ կազմւել էր մի զաշնակցութիւն, որի հետ կուելու համար երկու միջոց ունէի. կամ արհամարհել հասարակական կարծիքը և Գորդեան հանգոյցը խորտակել մի հարւածով կամ գիմել նոյն միջոցներին, որոնք իմ հակառակորդների սովորական զէնքերն էին— խորամանկութեան, բանսարկութեան, խարէութեան և

քսութեան: Ես անզօր էի թէ մէկի և թէ միւսի համար: Ես միայն մի բան կարող էի անել—տանչւել:

Եւ տանջւում էի:

Մի օր Միքայէլը պահանջեց, որ ես ստորագրեմ մի թուղթ, որով պիտի նրա եղբօրը տրւէր 15,000 ռուբլի իմ հայրական կարողութիւնից ինչոր կապալի համար: Ես չըստորագրեցի: Մարդը գաղանացաւ: Նա ինձ ապտակեց և յետոյ մի քանի անգամ բռնցկահարեց:

Այս, սիրելիս, այդտեղ հասաւ իմ վիճակը: Իմ, որի վրայ ոչ մի մարդկային ձեռք մինչև այդ օրը չէր համարձակւել բարձրանալ, որ այնքան դուրսուրւել ու փայփայւել էր իւր ծնողների տանը: Կարո՞ղ էր լինել աւելի մեծ ստորացում մարդկային արժանաւորութեան մի անձի կողմից, որի ծոցում բարձր կրթութեան վկայականն ունէր:

Արտասահմանից վերադարձաւ հիւանդ եղբայրս իւր ընտանիքով:

Այլ ևս համբերութեանս բաժակը լցուել էր: Ես վճռեցի գեհենից փախչել և եղբօրս հովանաւորութեան տակ մտնել:

Գնացի ծնողներիս տունը:

Բայց չէր անցել մի ամիս, երբ մի օր ինձ մօտ եկաւ Միքայէլի եղբօր կինը և աղերսեց վերադառնալ: Նա հաւատացրեց ինձ, որ իմ հեռանալուց յետոյ Միքայէլը տանջւում է անհուսապէս, մինչև անգամ հիւանդացել է:

Հարկաւ, ես մերժեցի: Ի՞նչ, վերադառնալ գէպի դաժանակիր աշխատանքի վայրը, ուր այնքան տառապել եմ: Երբէք: Աւաղ, այս անգամ ես յաղթողն իմ թուլութիւնն եղաւ: Եղբայրս ու նրա կինը թախանձեցին, և ես գիշեցի:

Այս անգամ Միքայէլը համաձայնւեց բաժանւել իւր մօրից ու եղբայրներից: Մենք մեզ համար առանձին բնակարան վարձեցինք:

Բայց փոխւեց միայն տանջանքներիս վայրը, իսկ նրանք մնացին նոյնը: Հակառակորդներս իմ տանն անգամ ինձ հանգիստ չըթողեցին իրանց ինստրիդներով, մասնաւոնդ մուրացկանութեամբ: Մի օր Միքայէլի մօր խոհանցից սամավարն են գողացել, պէտք է գնել նորը, միւս օրը նրա եղբօր ժամացոյցն է կորել, մի ուրիշ օր փողամանն և այն և այն, անվերջ: Եւ, հարստահարելով ինձ, դարձեալ չէին խնայում ոչ միայն իմ, այլև իրանց մերձաւորի պատիւը: Նրանք իմ մասին տարածում էին Միքայէլի պատիւը վարկաբեկող լուրեր:

Այս բոլորը, վերջապէս, ձանձրացրեց և՛ Միքայէլին:

—Գնանք թիվլիս, —ասաց նա մի օր, —այնտեղ կը հանգստանանք մի փոքր: Ի դէպս, մեր բնակարանի համար կահկարսանի էլ կը գնենք...

V.

Մի օր, թիվլիսից վերադառնալուց յետոյ, պատահեց հետեւեալը...

Միքայէլը, ճաշից յետոյ, առանձնացել էր իւր սենեակում և հանգստանում էր: Ես ևս գնացի այնտեղ մի փոքր զրոյց անելու:

—Հեռացիր ինձնից, —գոչեց նա յանկարծ, երբ ես փափագեցի նրան փաղաքել, —գու ինձ դաւաճանումնս:

Մարդու կեանքում լինումեն վայրկեաններ, երբ զայրոյթից նա քարանում է: Հարկաւոր եղաւ երկար ժամանակ, որպէս զի ես ոյժ ունինայի արտասահելու,

—Դաւաճանում եմ: Արդեօք, ում հետ:

—Այդ քեզ է յայտնի:

—Ո՞վ ասաց:

—Այդ իմ գաղտնիքն է:

Ես մի վայրկեան կարծեցի, որ Միքայէլը կատակ է անում և ծիծաղեցի: Նա կրկնեց, երեկնեց իւր զըրպարտութիւնը:

Հեկելանքը խեղգեց ինձ, դառն, անզուսպ հեկելանքը, որ մեր միակ սփոփանքն է:

Մի քանի օրից յետոյ Միքայէլի քոյրը երեսիս շպրտեց նոյն զրպարտութիւնը:

—Բայց, վերջապէս, ասելո՞ւ էք, թէ ով է ինձ անբաստանողը,—գոչեցի ես:

—Մի օր կիմանաս,—պատասխանեց Միքայէլը:

—Գոնէ անւանիր իմ մեղսակցին:

—Դու ինքդ կարող ես ասել մեզ նրա անունը:

—Սուտ էք ասում քոյր ու եղբայր, սուտ էք ա-

սում: Դուք ինքներդ էք հնարել այդ. գուք, մայր ու աղջիկ: Դուք խիզճ չունիք, նոգի չունիք, գուք օր օրի վրայ աւելի ու աւելի էք թաղւում տիղմի մէջ: Զեդ համար անմարսելի է իմ մաքրութիւնը, որովհետեւ ինքներդ անմաքուր էք: Դուք իմ զգւանքին անզամ արժանի չէք, գուք արժանի էք իմ արհամարհանքին միայն: Եւ ահա ես արհամարհումեմ ձեզ ու անուշադիր թողնում ձեր ստոր զրպարտութիւնը:

Ասացի և գուրս եկայ սեղանատնից ու փակւեցի իմ սենեակում, որպէս զի չըշնչեմ այն ապականւած օդը, որ շնչումեն նրանք:

Նոյն իսկ ճանճերը զայրացնումեն մեզ երբ շարունակ թառ են լինում մեզ վրայ ու կծոտում: Թող այդ ողորմելի արարածները լինէին ճանճերից անզամ չնչին, չոք որ ինձ խածնում էին ամեն օր, ամեն ժամ,

ամեն վայրկեան: Եւ միակ նպատակն էր այդ ստոր լուտանքների ու բանսարկութիւնների՝ պահպանել յարատե սամուլթիւն իմ և Միքայէլի մէջ:

Միքայէլն ընտրեց իմ ծննդավայրի քաղաքագոււխ: Պէտք է ասել, որ հասարակութեան մէջ նա վայելում էր ինելօք, զործունեայ և եռանդուն մարդու հոչակ: Հաւատում էին մինչև անգամ նրա բարոյական մաքրութեանը և հոգու աղնուութեանը:

Դժւար է այն կնոջ վիճակը, սիրելիս, որի ամուսինը յարգւած է ամենքից: Նրան միշտ սպառում է հասարակական կարծիքի ծանրութիւնը և իւր ամուսնուն արժանի չըհամարելու վտանգը: Մարդիկ սովոր են ուրիշների ամուսնական արժանաւորութիւններին նայել հասարակական արժանիքների պրիզմայով: Լաւ գործիչ է-կը նշանակէ և՛ լաւ ամուսին է ու լաւ հայր: Ոչ ոք չըգիտէր, որ այլ է Միքայէլը հասարակութեան մէջ, այլ է իւր յարկի տակ:

Դառնալով հասարակական ընտրելի, նա հրաժարեց հօրս գործերից, յանձնեց նրանց մեծ եղբօրս գործավար—ինսամակալին:

Սա Միքայէլից հաշիւ պահանջեց և մեծ ջանք գործ դնելով միայն կարողացաւ իմ օժիխոն ազատել նրանից: Այս հանգամանքը գրգուեց Միքայէլին: Նա վճռեց վրէժ աղնել... գարձեալ լինձնից: Սկսեց մեր մէջ զրամական մանր-մունը հաշիւների մի շարան: Բանն այնտեղ հասաւ, որ ես իմ հօր գոտղերն ամուսնուս եղբօրների ճանկերից ազատելու համար ստիպւեցի դատարանին գիմել:

Ելլը իմ դրամագլուխն իմ ձեռքն անցաւ, անմիջապէս գնեցի մի տուն: Մենք տեղափոխւեցինք այնտեղ:

Չեմ յիշում քանի տարի, բայց բաւական երկար ժամանակ Միքայէլը վարեց քաղաքագլխի պաշտօն: Եւ

որքան խորամանկ ու ճարպիկ լինէր, չըկարողացաւ թագյնել իւր իսկական բնոյթը: Շուտով նա հոչակւեց կոպտութեան ու անկրթութեան տիպար: Զըմոռանամ ասել, որ իւր այդ կոպտութեան պատճառով նա մի օր այն քաղաքում, ուր պետական չինովնիկ էր ամուսնութեանս առաջին տարիները, ենթարկւեց սպանման վտանգի մի թրքի կողմից:

Նրա քաղաքագլխութեան օրերով մեր ծննդավայրում բացւեց մի նոր օրիորդական դպրոց: Աւագ վարժուհի հրատիրւեց մի կրօնափոխ հրէուհի, կարճ հասակով և կարմիր կոպերով մի էակ: Շուտով քաղաքում տարածւեց, թէ Միքայէլն այդ կնոջ հետ մտերմական յարաբերութեան մէջ է: Ինչպէս սովորաբար պատաշում է, ամենից ուշ իմացողն ես եղայ, նրա ամուսինը:

Դու գիտես, սիրելիս, որ մենք կանայքս մեր ամուսիններից կարող ենք տանել ամեն բան—և՝ զրկանք, և՝ հալածանք, և՝ բռնութիւն, և՝ նոյնիսկ ծեծ, բայց դաւաճանութիւն, օօ, այդ զարհուրելի է: Զգալ, որ այն մարդը, որ քո կողակիցն է, որին այսպէս թէ այնպէս սիրումես, գրկում, համբուրում, պատկանում է և՝ մի ուրիշին—կընշանակէ կրել երկրային գեհենի տանջանքները:

Ես վճռեցի առ ժամանակ լուել: Ինձ լաւատես, կենսախինդ, ես միշտ հղել եմ հիւրընկալ դէպի կեանքը: Ինչ փոյթ, որ հէնց իմ առաջին քայլերից նա իմ վերաբերմամբ եղել է դաժան, ինչպէս մի խորթ և չարմայր:

Միքայէլն անիմայ և անողոք ոտնատակ էր առում իմ անձնասիրութիւնը, իմ պատիւը, իմ ամօթխածութիւնը: Նոյնն էին անում և՝ նրա մերձաւորչները—մայրը, քոյրը, եղբայրները: Ինչու: Միթէ այն ները

պատճառով, որ ես ամեն կերպ աշխատում էի նրանց վերաբերմամբ լինել հեզ, բարի, ներողամիտ:

Ի՞նչ է նշանակում այդ: Զէ որ այն, որ մենք կանայքս, եթէ ուզումնեք, որ մեր անհատական իրաւունքները ճանաչւին ու յարգւին, պէտք է մեր արեան գնով պաշտպանենք նրանց, միշտ բողոքենք, միշտ կռւենք և միշտ հարւածին հարւածով և վիրաւորանքին վիրաւորանքով պատասխանենք:

Յիշումն մի ֆրանսիական ասուածք. « Օծանիր ուամկին, նա քեզ կըբոնցկահարէ, բռնցկահարիր ուամկին, նա քեզ կօծանէ»:

Այո, սիրելիս, Միքայէլն իմ վերաբերմամբ ուամիկ էր, որովհետեւ ես նրան օճանում էի:

Իսքնօգնութեամբ իրանց համար ճանապարհ հարթած մարդիկ, հարկաւ, արժանի են ամեն յարգանքի, նոյն իսկ հիացման, բայց չըկան նրանց նման անհանդուրժելի ստեղծածներ աշխարհի երեսին: Որքան նըւում ունին իրաւունք պարծենալու իրանց եռանդով, իսելքով, կամքի ուժով, նոյնքան ի չարն են գործ գնում այդ իրաւունքը:

Նրանք սիրահարւած են իրանց վրայ ինչպէս մի նապօլէօններ և արհամարհներով են նայում հասարակ մահկանացուներիս: Ընկերական շրջաններում նրանք ուղղակի ձանձրակի են իրանց անսահման ուռած «եսով»: Ամենուրեք աշխատումնեն լինել մի տեսակ առանցք, որի շուրջը պիտի պատեն ամենքը, և ձգտումն նսեմացնել ուրիշներին: Իրանց «եսի» համար պահանջումն Աստւածային պաշտամունք ե երբ չեն ստանում, թունաւորում են այն շրջանի մթնուրտը, որ բաղդ ունէ նրանց մեծութիւնն իւր մէջ պարփակելու:

Այս օրից երբ Միքայէլն ընտրւեց քաղաքագլուխ,

իմ կեանքը կրկնակի դառնացաւ: Ես չըգիտէի ինչպէս գոհացնել նրա եսը, որ օրի վրայ ուռչումէր ու հրէշանում:

Կարող ես երեակայել, սիրելիս, թէ ինչ դարձաւ նա, երբ ընտրեց մեր նահանգի կողմից պատգամաւոր ինչ ինչ լիազօրութեամբ մայրաքաղաք գնալու համար:

Այս, — գոշեց նա իւր ընտրութեան օրը, — այս աստիճանին էլ հասայ: Եւ մեմ եմ պարտական իմ այս գիրքը: — Իմ և միայն իմ անձնական արժանաւորութիւններին:

Այլ ևս չըհանդուրժեցի ես և ասացի:

— Ոչ լիովին:

— Ի՞նչ, — զարմացաւ նա իմ յանդգնութեանը:

— Այո, դու շատ էլ իրաւունք չունիս պարծենաւոր քո անձնական արժանաւորութիւններով: Քո կարիքայի մի մասը դու ուրիշներին ես պարտական:

Միքայէլը սրբեց անձեռոցիկով իւր հաստ ու իւղութիւնքները և, մի հեղնական հայեացք ձգելով ինձ վրայ, ասաց:

— Կը կամենայի իմանալ՝ ովքեր են այդ ուրիշները:

— Նախ և առաջ իմ ծնողներն ու ես:

— Ահա թէ ինչ հետաքրքրական է լսել այդ ի՞նչպէս:

— Շատ պարզ է, մինչև ինձ հետ ամուսնանալդ դու պետական ինչող աննշան գործակալ էիր մի յետ ընկած վայրում և ստանում էիր չնչին ոռճիկ տարեկան: Համաձայնւիր, որ դու յայտնի դարձար մեր քաղաքում այն օրից, երբ ինձ հետ ամուսնացար: Քեզ քաղաքագլուխ ընտրեցին իմ հօր պարտապանները և այն անձինք, որոնց հանգուցեալն օգնել է իւր կեանքում:

Այս անգամ Միքայէլը կուլ տւեց ճշմարտութեան դառը պիլիւլ լուս:

## VI

Մի քանի օր անցած ես ասացի:

— Դու գնում ես Պետերբուրգ, ես քեզ հետ գալ չեմ կարող:

— Զեմ էլ ուզում, որ գաս:

— Շատ գեղեցիկ: Տալիս եմ քեզ կատարեալ ազատութիւն. մեր ճանապարհներն այսուհետեւ բաժանում են:

— Ի՞նչ ես ուզում ասել գրանով:

— Այս, որ այլ ես իմ ոյժերը սպառւեցին, բաւական է, որքան տանջւեցի:

Միքայէլը չըբարկացաւ: Նա ասաց.

— Մինա, դու շարունակ կրկնում ես, որ ես կոպիտ եմ, գաժան, մի խօսքով լաւ մարդ չեմ: Ասախնդիւմ, այդ ինչիցն է, որ այսպիսի մի հակարելի մարդ այնքան յարգւած ու սիրւած է ամենքից:

— Քեզ ոչ ոք չի սիրում: Գալով յարգանքին, այդ գուցէ առաջ էր, իսկ այժմ այդ էլ չըկայ:

— Զեկայ և Բնձ են ընտրում ամեն անգամ հասարակական խոշոր պաշտօնների համար:

— Այս անգամ քեզ ընտրեցին որպէս զի ազատւեն քենից իրեկ քաղաքագլուխից:

— Ահա թէ ինչ հետաքրքրական է իմանալ ինչից եղրակացրիր այդ:

— Քաղաքում պտասղ լուրերն երբեմն ինձ էլ են համում: Եւ այն, ինչ որ լսում եմ քո մասին, շատ անգամ խոցոտում է իմ ինքնասիրութիւնը: Զէ՞ որ ես քո պղտանուն եմ կրում և մեր բարոյական վարկերը կապւած են միմեանց հետ: Ահա հէնց այլ կապն է, որ ես ուզում հմ խորտակել մի հարւածով: Ես վճռել

եմ քեզնից բաժանւել, ահա իմ խօսակցութեան միակ նպատակը:

### Միքայէլը չըզարմացաւ:

—Այո, —ասաց նա ամենայն հանգստութեամբ, — ես էլ եկել եմ այն եղբակացութեան, որ պէտք է բաժանւինք: Մենք տարբեր խառնւածքների մարդիկ ենք: Բաժանւինք, սակայն լաւ իմացիր, որ ես քեզ ապահարզան չեմ տալու:

—Այդ մասին ես առ այժմ չեմ էլ մտածում: Իմ միակ ցանկութիւնն է ազատւել քեզնից և քո մերձաւորներից:

Մի բանի օր անցած՝ Միքայէլն ուղևորւեց մայրաքաղաք, ես մնացի իմ ծննդավայրում:

Այստեղ նա մնաց երկու ու կէս ամիս: Լուր ստացայ, որ յետոյ գնացել է հանքային ջրերը բժշկւելու համար:

Ես ամենսկին չի սպասում, որ մենք դարձեալ պիտի հանդիպենք իրարու: Համոզւած էի, որ հանքային ջրերից նա կերթայ մի ուրիշ քաղաք: Երեակայիր, սիրելիս, իմ զարմանքը, երբ աշնանը մի օր նա եկաւ այն քաղաքը, ուր ես էի, և սկսեց թափանձել, որ նորից միանանք: Օօ, պէտք է տեսնէիր, թէ նա ինչպէս էր փոխւել: Նա մեղայ եկաւ իմ առջե. նա խոստովանեց իւր բոլոր տպեղ արարքները, իւր կոպտութիւնը իմ վերաբերմամբ և երգւեց այլս ինձ չը վշտացնելու մի գործով, ոչ մի խօսքով:

Եւ ես միամիտս հաւատացի նրան: Ինձ չըվրդուից նրա առաջարկը, բայց չը համաձայնեցի ընդունել:

Նա նորից աղերսեց, նորից երգւեց, որ ինձ կը պաշտէ սրբի պէս:

Ասումեն, սովորութիւնն երկրորդ բնոյթն է մարդու: Ինձ համար նա եղել է առաջինը, և ես կարծումեմ

նոյնն է նա և ամենքի համար: Լսէլ ես, որ գերասանը կարողանայ կամաւոր թողնել բեմը երկար տարիներ նրա մթնոլորտը շնչելուց յետոյ: Լսէլ ես, որ արբիրուը կարողանայ համարւել ալքօհօլից կամաւոր: Ես կարծում էի, որ, բաժանւելով Միքայէլից, յաւիտեան կըմոռանամ նրա գոյութիւնը: Աւաղ, ես մոլորւած էի: Բաւական էր, որ նա երկար մեր քաղաքում, և ես արդէն զգացի անհանգստութիւն: Կարծես, նա չէր եղել իմ անհուն տանջանքների անսպառ աղբիւրը:

Այսպէս, ուրեմն, ես նորից վերապարձայ այն գեհէնը, որից փախել էի այնպիսի գարշանքով:

Միքայէլն ինձ առաջարկեց գնալ արտասահման «քիչ հանգստանալու», քիչ բժշկւելու և քիչ գուարճանալու»:

Մենք ուղևորւեցինք Վիեննա, ուր մնացինք ընդդմենը մի շաբաթ: Հայրենիքից հեռանալիս Միքայէլն ինձ չըթողեց հազարեղէն վերցնել, ասելով, թէ երրոպայում կարելի է նորերը պատւիրել: Իսկ երբ Վիեննայում կամեցայ մի կամ երկու ձեռք հազուստ պատւիրել, հակառակեց, համոզելով ինձ, թէ Պարիփում աւելի էժան են կարում և աւելի լաւ: Բայց գնացինք Պարիզ, երեք ամիս մնացինք այստեղ, և ես շարունակումէի կրել իմ ճանապարհի հագուստը, որովհետեւ այդտեղ էլ Միքայէլն ինձ արգելեց փող ծախսելու:

Այդ մարդու ժլատութիւնն այնտեղը հասաւ, որ չըթողեց մի նոր տաք վերարկու անգամ գնելու, և ես ստիպէած էի հնով գուրս գալ փողոց:

—Պարոն, ասաց մի օր մի ոռւս ժեներալի կին, որ նոյն հիւրանոցումն էր իջևանել, ուր մենք, —ինչո՞ւ էք թոյլ տալիս, որ ձեր ամուսինը վաս հագնւի:

Միքայէլ ոչինչ չըկարողացաւ պատասխանել, բացի, հարկաւ, ստելուց.

— Նա Վիեննայում կըպատռէիրէ այնքան հագուստներ, որքան կամենայ. այնտեղ տւելի նուրբ ճաշակով են կարում:

— Եէ, պարոն, — նկատեց ուուս տիկինը, — ինչպէս երկում է, զուք այնտեղ էլ չէք պատռէիրիլ: Ժլատ էք, պարոն: Նայեցէք ինձ. ոչ իմ ամուսինն է ձեր չափ հարուստ և ոչ հս ձեր ամուսնու չափ երիտասարդ, և, չընայելով սրան, դարձեալ հագնւում եմ շքեղ, ի հարկէ, կարողութեանս ներածին չափ: Գեղեցիկ կին ունեցող գեղեցիկ էլ պիտի հագցնէ նրան:

Ծախսելը Միքայէլի համար հաւասար էր տանջելուն: Եւ ոչ միայն իւր սեպհականի, այլև իմը ինձ համար: Ես կարիք չունէի նրա դրամին, ես կեանք քումն գրօշի չափ օգտաւծ չեմ նրա անձնական վաստակից: Բայց նա ժլատ էր. ոչ միայն իւր, այլև իմ ունեցածի վերաբերմամբ, որովհետև իմն էլ իրանն էր համարում:

Շնորհիւ իւր կոպտութեան Միքայէլը սովորութիւն ունէր ինձ հետ մի տեղ գնալիս կամ բույլվարներում զբունելիս միշտ մի քանի քայլ ինձանից առաջ ընթանալ: Որքան նկատում էի, որքան յանգիւմանում, չէր ուղղում հասկանալ, որ դա գաւառական գոեհկութեան նշան է:

Եւ ահա մի անգամ Պարիզի բազմամարդ փողոցներից մէկում, խուռն ամբոխի մէջ ես նրան կորցրի: Մնացի շւարլած, դէս ու դէն նայելով: Առաջ վազեցի չըգտայ, յետ եկայ, չընանդիպեցի: Վճռեցի վերադառնալ հիւրանոց: Ճանապարհս կորցրի, մոլորեկցի: Այն ժամանակ ես միանգամայն անծանօթ էի Պարիզի պլանին: Զգիւտէի, որ այնտեղ փողոցները զուգահեռական չեն, այլ աստղաձև, որ՝ մի ուղղութիւն վերցնելով կարծում ես, թէ կընասնես այն ինչ տեղը, գուրս ե՞ս

գալիս հակառակ կողմ:

Մինչեւ երեկոյ ես թափառում էի դէս ու դէն տիսուր, մտամոլոր: Հարկաւ, կարող էի կառք վերցնել, բայց քովս դրամ չըկար. Միքայէլն ինձ մօտ փող չէր թողնում: Վերջապէս, յոգնած, ուժասպառ նստեցի առաջին պատահած ֆիակը և ասացի մեր հիւրանոցի անունը: Կառապանը գտաւ, և հիւրանոցի կառավարիչը վարձադրեց նրան իմ փոխարէն:

Ի՞նչ ես կարծում, սիրելիս, Միքայէլը ներժւմ խնդրեց իւր անքաղաքավարութեան համար կամ զրդաց: Ամենսկին: Ընդհակառակը, նա ինձ նախատեց և գուաց ըստ իւր սովորութեան: Այո, այդ մարդը միշտ գոսոցներով էր խլացնում իւր խզճի ձայնը, եթէ միշտ նրա մէջ մնացել էր խիղճ իմ վերաբերմամբ:

Բայց այս բոլորը ոչինչ այն գտն կսկիծի համեմատ, որ ունեցայ մի տարաբաղդ առաւտ:

Փոստաբերը բերեց Միքայէլի անունով մի քանի նամակներ, որոնց թւում մէկը գրաւեց իմ առանձին ուշադրութիւնը:

Միքայէլը տանն էր:

Ես չը կարողացայ հետաքրքրութիւնս զսպել, բաց արի, որ կարգամ: Բայց նախ նայեցի ստորագրութեանը. «Քո Ռախիս»... Դա այն հրէայ վարժուհին էր, որի հետ Միքայէլը մտերիմ յարաբերութիւնների մէջ էր:

Ես զվանքով շպրտեցի նամակը Միքայէլի երեսին, մի քանի անգամ կրկնելով.

— Անառակ, անառակ...

Տեղի ունեցաւ մի փոթորկալի տեսարան, որի հետևանքն եղաւ իմ ուշաթափուիլն ու յիսոյ դառը հեկեկանքը:

Միքայէլը կատաղեց: Նա, որ ուաքից մինչև գլուխ յանցաւոր էր իմ առջեւ: Նա, որ ինձ դաւաճանել էր մի

հրէուհու հետ, որ ինքն իրան վաճառքի շուգան էր դուրս բերել: Եւ այդ մարդը զեռ խանդումէր ինձ: Խանդում տոանց որե է իրաւունքի ամենայն ասիականութեամբ:

Առաջ եմ բերում մի քանի փաստեր նրա անսահման խանդութիւնից:

Պարիղ եղած ժամանակ մենք այցելում էինք մի միջակ ճաշարան: Մի երիտասարդ ֆրանսիացի բարեհանեց ուշադիր լինել դէպի ինձ և շարունակ հարեան սեղանի մօտից նայում էր: Դուրս գալու միջոցին նա առաջին օրը ճարպիկութեամբ մեզ առաջեց և իբր թէ անփոյթ, գոները բաց արաւ իմ առջե և, գլուխ տալով, ճանապարհ տեց: Այդ նա արաւ մի քանի օր շարունակ, այնքան, որ Միքայէլը կատադեց և խօսքով վիրաւորեց նրան:

Ամուսնութեանս առաջին տարիները Միքայէլի պաշտօնավայրում մի ինչ-որ հարուստ կալածատէր թուրք, որի երեսն անգամ չէր տեսել, հրապուրեւէլ էր իմ արտաքինով: Մի օր Միքայէլը ոեվոլվերը վերցրեց և գնաց նրան սպանելու: Բարերազդաբար, մարդիկ կարողացան նրան զսպել: Նա բաւականացաւ միայն թուրքին ծեծելով:

Մի ուրիշ անգամ, մի ուրիշ քաղաքում, ուր Միքայէլը բանկի կառավարիչ էր, մի օր տուն եմ վերադառնում և մեր սեղանատանը, սալօնում և ընդունաբանում զանում եմ ծաղիկների փնջեր:

—Այդ ով է ուղարկել,—զոռում է Միքայէլը:

—Չոքիտեմ:

—Իսկ ես գիտեմ: Դա քո ջերմ երկրպագուներից մէկն է:

—Ո՞վ է, արդեօք, իմ այդ ջերմ երկրպագուն, —հարցում եմ ես:

Դուրս է գալիս, որ դա իւր բարեկամներից

մէկն է, որին հազիւ երկու անգամ պատահել էի իւր ներկայութեամբ:

Նա չէր ուզում ըմբոնել, որ եթէ ես կամենայի կարող էի ամեն օր զաւաճանել նրան և նա ոչինչ չէր իմանալ: Նա չէր ուզում զգալ, որ ոչ միայն ամուսնութեան առաջասարի դէմ մեղանչելը այլև սոսկ խարէութիւնը հակառակ է իմ խանւածքին:

## VII

Ուստաստան վերադառնալիս Վիեննայում Միքայէլը բարեհանեց գնել ինձ համար մի վերարկու (այն ժամանակ, երբ այլևս հարկաւոր չէր) և մի ձեռք հագուստ:

Զգացի ինձ ոչ առողջ և դէպքից օգտւելով դիմեցի աւստրիական նշանաւոր բժիշկներից մէկին: Բարերազդաբար, նա լուրջ բան չըգտաւ, բացի արեան սակաւութիւնից: Այսուամենայնիւ, դարմանսել հարկաւոր էր, բայց այստեղ ևս Միքայէլի առասպեկտական ժլատութիւնը ցոյց տեց իւր անոելի կերպարանքը:

Նա ասաց.

—Այստեղ բժիշկները շատ թանգ են վերցնում, դու կը ժշգուիս Պետերբուրգում:

Մեր վերադարձից միքանի ամիս անցած, Միքայէլը հրաւիրեց մի քաղաքի առևտրական բանկի կառավարիչ:

Ես ուրախ էի որ, վերջապէս, պիտի հեռու լինինք նրա եղբայրներից:

Բայց ձրիակերների այդ վոհմակը այնտեղ ևս մեզ հանգիստ չը թողեց. եղբայրները շարունակ ոմբաշկոծում էին Միքայէլին իրանց աղերսալի նամակներով, որ ուրիշ ոչինչ էին եթէ ոչ անվերջ մուրացկանութիւն:

Մէկն իւր որդու ուսման վարձն էր պահանջում կամ աղջկայ համար օժիտ, միւսը խանութ էր ուզում բաց անել և այլն և այլն: Եւ ամեն մէկը սպասում էր անձամբ արշաւել մեղ վրայ, եթէ իւր խնդիրը չըշկատարւէր:

Մէր բնակարանը քաղաքում բաղկացած էր երեք անշուք սենեակներից միայն, որովհետեւ, ձմեռը տեղափոխւելով, աւելի մեծ և աւելի յարմար կացարան չըշկարպացանք գտնել:

Այստեղ ևս Միքայէլն իր մշտական սովորութամբ խորչեց հասարակութիւնից: Մէնք ոչ մի տեղ չէինք լինում, հարկաւ, ոչ ոք էլ մեղ մօտ չէր գալիս, բացի բանկի հաշտապահ Աղեքսանդր Բիլանեանից: Դա մի շատ համեստ և պարկեշտ երիտասարդ էր, որ ամենքի վրայ հաճելի տպաւորութիւն էր անում իր մաքուր բարոյական աշխարհայեցողութեամբ:

Միքայէլը նրան յարգում էր ու սիրում ոչ միայն իրքեւ ընդունակ և բարեխիղճ պաշտօնեայի, այլև իրքեւ արժանանաւոր մարդու:

Բիլանեանը ոչ տգեղ էր ոչ գեղեցիկ, ոչ շատ խելօք, ոչ յիմար: Նա մէկն էր այն միջակ տիպերից, որոնք կեանքում միշտ միջակ դեր են խաղում և որոնք ոչ մի կնոջ չեն կարող հրապուրել:

Միքայէլը յաճախ բանկի գործերով գնում էր ուրիշ տեղեր: Այդ միջոցներին միակ անձը, որին վստահանում էի ընդունել դարձեալ Բիլանեանն էր:

Մի օր նա եկաւ և սովորական խօսակցութեան չոցին յայտնեց, թէ մի ինչ որ եկտոր դրամատիական խումբ երեկոյին ներկայացնելու է մի շատ հետաքրքրական պիես:

Պէտք է ասած, որ ես շատ էլ կուշա չէի թատրոնից: Միքայէլն առհասարակ չունիր սէր դէպի թատ-

րոն և գեղարւեստներ, իսկ ես չէի կարող առանց նրա որ և է տեղ գնալ:

Խնդրեցի Բիլանեանին ինձ ընկերանալ թատրոն գնալու: Նա ուրախութեամբ համաձայնեց և որոշեալ ժամին եկաւ ու ինձ ուղեկցեց:

Պիեսն ինձ անծանօթ էր տակաւին, թէև հեղինակի մասին գաղափար ունէի: Դա իրսէնի նօրան էր, ուր այնքան ընթրյշ, այնքան սքանչելի հոգերանօրէն, այնքան ձիշտ նկարագրւած է առօրեայ կեանքի տափակութիւնից տառապող կնոջ հոգեկան աշխարհը:

Երրորդ խաղամիջոցին ֆոյէյում զբօնող հասարակութեան միջից յանկարծ լսեցի Միքայէլի ձայնը:

Յայտնեց, որ ճամբրորդութիւնից վերադառնալով, խոհարարից տեղեկանում է, որ ես թատրոնումն եմ և շտապում է այնտեղ առանց հագուստը փոխելու անգամ:

Երբ նա մօտեցաւ ինձ, ես նրա աչքերի արտայայտութիւնից խկոյն զգացի, որ զայրացած է:

Վերադառնաք առւն, և այստեղ սկսեց այնպիսի մի տեսարան, որ ես ստիպեցի անիծել թատրոնն էլ, պիեսն էլ, Բիլանեանին էլ, ինձ էլ:

—Դու ինչպէս համարձակւեցիր առանց ինձ թատրոն գնալ, —գոռաց Միքայէլը:

—Ես մինչև այսօր չեմ կարողանում հասկանալ, թէ ինչ յանցանք է առանց քեզ մի տեղ գնալը:

—Յանցանք է թէ չէ, ես այդ չեմ սիրում:

—Դու շատ բան չես սիրում, միթէ ես պիտի քո կամքի ստրուկը լինիմ մինչև իմ կեանքի վերջը: Միթէ ես չըպիտի ունենամ իմ ցանկութիւնները, իմ ճամփէ անէ մի կիս, որի ամուսինը ոչ մի տեղ ինչ անէ մի կիս, որի ամուսինը ոչ մի տեղ չի տանում նրան և ոչ էլ թողնում է, որ նա մենակ

տնից դուքս գայ: ԶԵ՞ որ ես երխտասարդ եմ, չԵ՞ որ  
ապրելու փափազն այնքան վառ է իմ մէջ. կամեցայ  
թատրոն գնալ ու գնացի:

—Օտար տղամարդի հետ:

—Միթէ՞ ուրիշ կանայք չեն գնում թատրոն ի-  
րանց ծանօթների հետ:

—Ուրիշ կանայք լիրը են:

—Ամաչիք դիպլոմիցդ, Միքայէլ, չԵ՞ որ նա  
քեզ պարտաւորեցնում է յարգել կանանց:

—Ոչ մի դիպլոմ չի կարող ինձ համողել, որ կիսն  
ազատ է անելու իւր կամեցածը: Բայց բաւական է,  
այդ թիւնեանի համար այսուհետեւ իմ տան դռները  
փակ են:

—Օօ, ճանաչում եմ քեզ, ճանաչում եմ,—գոչեցի  
ես մինչև հոգոյս յատակը պղտորւած,—քո խանդը  
չափ չունէ, սահման չունէ: Դու ինձ խանդում ես  
ոչ միայն կենդանի մարդկանց, այլև մեռեալների վե-  
րաբերմամբ: Յիշում ես, օրիորդ ժամանակս այն լե-  
հացուն, երբ դու գեռ իմ փեսացուն էիր միայն: Ի՞նչ  
էր արել այն խեղճը: Ոչի՞նչ: Մի շատ սովորական,  
շատ ընդունւած բան, հետամուտ էր եղել ինձ մի ժա-  
մանակ, երբ ազատ էի և հետամուտ էր եղել ձեռքս  
խնդրելու մաքուր նպատակով: Մի օր ես կարդացի նրա  
յանկարծահաս մահւան լուրը լրագրում և արտայայ-  
տեցի իմ վիշտը, իրեք մի զգայուն մարդ: Դու գոռացիր  
ինձ վրայ, դու չըկարողացար այդ վեհ բոպէին անդամ  
մնալ քո մարդկային բարձրութեան վրայ:

Ասաց և կատարեց: Այդ օրից ես այլևս չըտեսայ  
թիւնեանի երեսը: Եւ այսպիսով մեր տունը զրկեց  
իւր միակ և վերջին այցելուից:

Այն քաղաքը, ուր մենք ապրում էինք այժմ,  
գտնում էր ճահճային մի վայրում: Այնտեղ ամառն

անհնարին էր մնալ ցերեկւայ անտանելի շոքերից,  
գիշերւայ խոնաւութիւնից և մոծակներից:

Միքայէլը բարի եղաւ թոյլ տալու ինձ, որ գնամ  
հանքային ջրերը բժշկւելու:

Այնտեղ նորից դիմեցի բժիշկների օգնութեան:

Մի բժիշկ ասաց, թէ հարկաւոր է ինձ ինչոր  
օպերասիօնի ենթարկել, մի ուրիշն աւելորդ համարեց  
օպերասիօնը: Որովհետեւ տարիների ընթացքում իմ  
սեպհական կամքը Միքայէլի ձեռքում տրորելով,  
լաթ էր գարձել, ուստի զրեցի իմ գլխի տիրոջը և  
նրա կտմքը հարցը:

Կարող ես երեակայել, նա երեք նամակներիս և  
ոչ մէկին պատասխանեց: Այն ժամանակ ես որոշեցի  
անել այն, ինչ որ իմ խելքն էր թելազրում: Ես սկսե-  
ցի գարմանւել այն բժշկի մօտ, որ օպերասիօնն աւե-  
լորդ էր համարում:

Մի օր այդ մարդն ինձ ասաց.

—Գիտէք, տիկին, քառասուն տարւայ իմ փորձն  
ինձ համոզել է, որ կանանց հիւանդութիւնների իննը  
տասներորդականը ընտանելան այս կամ այն դժբաղ-  
դութեան արգիւնք է: Դուք զաւակներ չունիք—ահա  
ձեր թշւառութեան առաջին հետեանքը...

Ակնարկը պարզ էր ու հասկանալի:

Այն տունը, ուր մենք բնակւում էինք, կառուց-  
ւած էր չորացրած ճահճի վրայ, ուստի սաստիկ խոնաւ  
էր, չընայելով, որ մենք կենում էինք երկորդը՝ բկում:  
Ամենքը խորհուրդ էին տալիս դուրս գալ այնտեղից:  
Սակայն Միքայէլի ժլատութիւնն այդտեղ ես խոչնոտ  
եղաւ:

Բանն այն է, որ տունը պատկանում էր բանկին,  
և մենք բնակարանի համար վարձ չէինք տալիս:

## VIII

Մի օր ձեռքս ընկաւ մի նամակ:

Գրողը Միքայէլի փոքր եղբօր կինն էր և նամակն ուղղած էր Միքայէլին:

Լսիր, սիրելիս, և տես, թէ կինն ինչ ահուելի տան-ջանքների է ընդունակ յանուն ընտանիքի:

«Յարգելի եղբայր».

«Բնդունեցէք մեր բոլորի կողմից սիրալիր բարե-ներ և նոյնը հաղորդեցէք ձեր յարցիլի ամուսնուն, տիկին Մինային: Ես ձեզ երբէք չեմ գրել, ուստի, ան-կամած, զարմանալու էք, ներկայ նամակս ստանալով: Սակայն մարդկային ամենամեծ համբերութիւնն անդամ չափ ունէ: Իմ համբերութեան բաժակը վաղուց է լեց-ւել—ահա ինչու համարձակւեցի ձեզ գրել:

«Թանգագին եղբայր, ես տանջւումեմ ձեր հարա-զատ եղբօր ձեռքում: Տանջւումեմ դիշեր—ցերէկ, ան-ընդհատ, անսահման: Իմ տէրը, ձեր եղբայրն ինձ ան-վերջ վիրաւորում է: Ինչու—կըհարցնէք անշուշտ: Պատ-ճառը երևակայական է, յօրինաւած: Նա ասում է, թէ իրը իմ ծնողները, բացի իմ բերած օժիտից, խոստացել են նրան մի գումար ու այժմ չեն կատարում իրանց խոստումը: Երդում եմ ծնողներիս անունով, որ դա սուտ է, որ նրանք երբէք ոչ մի խոստում չեն արել և եթէ արած լինէին, վաղուց կըլինէին կատարած:

«Վկայ է ձեր հանգուցեալ մօր գերեզմանը: Բայց աւաղ, ձեր մայրն էլ անգութ էր իմ վերաբերմամբ: Զէ որ նա մի անդամ ինձ տնից գուրս արաւ:

«Ամեն օր ձեր եղբայրը կըկնում է.

—Ի՞նչ գու չըգիտե՞ս, որ փողի համար է, որ քեզ պահում ենք: Պահանջիր ծնողներիցդ, պահանջիր, և ես քեզ այլ ևս չեմ ծեծիր:

«Եւ տասներկու տարի է շաբունակւում է իմ այս գժոխային կացութիւնը ու տասներկու տարի է, որ ես լուսում եմ. լուսում, որպէս զի ծաղրի և ատելութեան ա-ռարկայ չըդարձնեմ ձեր գերդաստանը, ձեր տոհմի ա-նունը: Ահ, օր չի անցնում, որ չարտասւիմ: Եւ ինչնէ: Միթէ ես եմ մեղաւոր, որ ձեր եղբայրը կեանքում յաշողութիւն չունէ, որ նա չի կարողանում իր բազ-մանգամ ընտանիքի օրւայ պարէնը հայթայթել: Ես ինչ իրաւամբ փող պահանջեմ իմ ծնողներից, քանի որ նրանք մի անգամ տւել են ինձ իմ հասանելիքը և վերջացրել: Ես ինչ մեղաւոր եմ, որ ուսումնարանի վե-րատեսուչը ձեր եղբօր զաւակից ուսման վարձ է պա-հանջում, և հայրը չի կարողանում վճարել:

«Ահ, եղէք ներողամիտ, յարգելի եղբայր, նամակս գրում եմ, աղի արցունքներ թափելով:

«Խղճացէք ինձ, բարի եղէք, ինայեցէք ոչ ինձ, այլ ձեր հարազատ եղբօր զաւակին: Ուղարկեցէք նրա ուս-ման վարձը: Ես անկարող եմ այլ ես տանել այս սոս-կալի վիճակը: Ահա երեք տարի է, որ ես անբուժելի հիւանդ եմ շնորհիւ իմ դժոխային կեանքի:

«Օգնեցէք ինձ և ձեր բարի խորհուրդներով: Ի՞նչ անեմ, ում զիմեմ, ի՞նչպէս ազատեմ ձեր եղբօր ան-վերջ հալածանքներից:

«Ես այդ հալածանքները թագցրել եմ և թացնուս եմ ոչ միայն օտարներից, այլև մերոնցից: Թագցնուս եմ յանուն ձեր գերդաստանի, որի անդամներից մէկն էլ գուրք էք, յարգելի եղբայր...

«Ներողամիտ եղէք, որ ձեզ ձանձրացնում եմ: Ի՞նչ արած, ես ուրիշ յոյս չունիմ, բացի ձեր աջակցութիւն-նից: Խղճացէք և մի մերժէք այդ օգնութիւնը:

«Խորին յարգանքով ձեր եղբօր կին N... N...  
Ահ, սիրելիս, եթէ աղջիկդ օժիտ ունէ, մի տուր

Նրան կամ, եթէ տալու ես, պահանջիր, որ նա չամռաւ-նանայ աղքատ երխտասարդի հետ: Թող նա չըհաւատաց տղամարդկանց գեղեցիկ փուղներին իդէալների և բարձր գաղափարների մասին: Նրանք չեն պղծում իրանց հոգին ու մարմինը միայն այն պատճառով, որ չունին միջոց պղծելու: Նրանք նման են այն չինով-նիկներին, որոնք պարձենում են, թէ երբէք կաշառք չեն վերցրել, մոռանալով, որ ոչ ոք նրանց կաշառք չեն տւել, որ կարողանային վերցնել: Նրանք նման են այն գանձապահներին, որոնք պարձենում են, թէ չեն գողացել, թաղցնելով, որ դրամարկղում գողանալու բան չի եղել:

Նրանք աղնիւ են այնքան ժամանակ, որքան աղքատ են: Նրանք գառներ են երբ ճանկեր չունին և գայլեր, երբ կարող են յօշատել:

Կնոջ նամակից շատ չանցած յայտնւեց մարդը: Մի առաւօտ, տնից գուրս գալու ժամանակ, ես նրան հանդիպեցի փողոցում, մեր գոների մօտ: Պարզւեց, որ նա եկել է դարձեալ մուրալու իւր եղբօրից: Ով զիտէ, գուցէ հէնց նա ինքն էր ստիպել կնոջն այն նամակը գրելու:

Նա ստացաւ իւր ուղածն ու գնաց:

Ճիշտ նոյն օրերին ես կամեցայ ինձ համար նոր հագուստ պատիրել, հարկաւ, իմ փողերով: Միքայէլը թոյլ ըըտեց:

Մենք ունեցանք մի նոր փոթորկալի ընդհարում: Եւ զիջողը դարձեալ ես եղայ: Եյո, սիրելիս, ես զիջում էի, շարունակ զիջում ոչ այնքան բարոյական ոյժերիս զակասութեան որքան ամօթի շատութեան պատճառով:

Նա զիտէր գուալ այնպէս, որ փողոցի անցորդ-ներն անգամ լսում էին: Ինձ համար մահացու հարւած էր այդ հասարակական խայտառակութիւնը, իսկ նա արհամարհում էր մարդկանց կարծիքը ցինիքաբար, այն

ժամանակ, երբ հարկաւոր էր յարգել և յարգում այն ժամանակ, երբ պէտք էր արհամարհել:

Նա քծնում էր զօրաւորներին և հալածում թոյլերին:

Երբէք չեմ մոռանալ նրա մի վարմունքը երբ քաղաքալուխ էր:

Մի երեկոյ մենք կառուլ զբունում էինք քաղաքի գլխաւոր փողոցներից մէկում: Յանկարծ նա կառքը կանգնել տեղ: Բաւական ուշ երեկոյ էր, լապտեր վառողը, սանդիպաի վրայ կանգնած, լամպարը սրբում գողացել, թաղցնելով, որ դրամարկղում գողանալու բան չի եղել:

Ի դէպս, լուսաւորութեան կապալառուն այդ միջոցներին Միքայէլի եղբայրն էր և հէնց սա էր հրամայել լապտերներն ուշ վառել...

Պատահեց մի անսպասելի նոյն իսկ անհաւատայի բան. այն մարդը, որ փախչում էր հասարակութիւնից, թատրոններից, ակումբներից, այն մարդը, որ գեղեթատրոններից, միանգամայն այլակերպւեց, նա սիրեց ընյանկարծ միանգամայն այլակերպւեց, նա սիրեց կերպական խնճոյքները, գլաճութիւնները, զբոսանք-կերպական խնճոյքները, գլաճութիւնները, զբոսանք-

կերպական խնճոյքները, գլաճութիւնները, զբոսանք-

կերպական խնճոյքները, գլաճութիւնները, զբոսանք-

կերպական խնճոյքները, գլաճութիւնները, զբոսանք-

էր գալիս տնից: Թէ ուր էր գնում և ինչու—չըգիտէի: Զէի էլ հարցնում:

Արտաքին փոփոխութեան հետ նկատելի էր և ներքին փոփոխութիւն: Առաջ նա կոպիտ էր, այժմ վերաբերում էր գէպի ինձ մի տեսակ արհամարհանքով ու ծաղրով:

Նա ծաղրում էր իմ արտաքինը, որով մի ժամանակ այնքան հրապուրւած էր, իմ խելքը, սիրու; Հոգին, որոնք իրանց հաւասարը չունէին նրա կարծիքով, քանի որ ևս օրիորդ էի և քանի որ նա հետամուտ էր ինձ:

Նա ծաղրում էր ինձ ոչ միայն երես առ երես, այլև ուրիշների ներկայութեամբ, այլև իմ բացակայութեամբ: Իւրաքանչիւր նրա խօսքից, իւրաքանչիւր ձերից ու շարժումից ես զգում էի, որ նա ինձ իրան անարժան է համարում: Այն մարզը, որ մի ժամանակ սողում էր իմ ուսների տակ, ձգտելով արժանանալ իմ ձեռքին, այժմ ամենքի մօտ պարծենում էր: Ինչո՞վ: Իւր հարսաւութեամբ, գիրքով: Օտար քաղաքում ոչ ոք չէր ճանաչում իմ ծնողներին, ոչ ոք չըգիտէր Միքայէլի անցեալը, ուստի բնական է, որ ամենքը պիտի հաւատային նրան, ինչ որ էլ ասէր: Իսկ ես, յիմարս, պատասիրութիւնից դրդւած, ամօթիածութիւնից զըսպւած, լոռում էի և տանջլում:

Այժմ ես մենակ էի աւելի քան երբ և է: Մենակ, որպէս անսէր, անսատար որբ մի օտար շրջանում: Ոչ մի տեղ չէի լինում, որովհետև ոչ մի տեղ չէր բարեհնառում տանել ինձ ամուսինս և ոչ մի տեղ չունէի իրաւունք զնալու առանց նրա կամ առանց նրա հրամանի:

Կողմանակի լսում էի, որ ոմանց հարցին, թէ ինչու

հասարակութեան մէջ երեսում է առանց ինձ, նա պատասխանում է.

—Որովհետև կինս ներվային հիւանդ է, չի կարողանում հասարակութիւն տեսնել:

—Հապա ինչո՞ւ չէք բժշկել տալիս:

—Ես, մի ասէք, —պատասխանում է ստախօսը խղճի ամենայն անդորրութեամբ, —զա մի կատարեալ թշւառութիւն է ինձ համար: Նա յամառում է, բժշկուել չի ուզում, չընայելով իմ անվերջ աղերանք ներին:

Եւ մարդիկ հաւատում էին նրան, և ևս ներկայանում էի նրանց իրբեկ մի կին, որ թունաւորում է իւր ամուսնու, իւր պաշտպանի, հովանաւորի, իւր կերակրողի գոյութիւնը:

Մի օր Միքայէլն ինձ ծանօթացրեց իւր բարեկամ մի փաստաբանի և նրա կնոջ հետ, որ երաժշտութեան ուսուցչունի էր:

Նրանց ազգանունն էր Տարատինօվ:

—Ի՞նչ հիանալի ամուսին ունիք, —ասաց ինձ մի օր տիկին Տարատինօվան, —նա ձեզ սիրում է անհունապէս: Քանի քանի անգամ նա իմ ներկայութեամբ երգւել է, թէ իւր կեանքը չի ինայիլ ձեզ համար:

—Այս, —ասացի ես անտարբեր, լաւ հասկանալով այդ տեսակ երգումների արժէքը:

—Այս, այս, տիկին, նա պաշտում է ձեզ: Բայց, ասացէք ինչո՞ւ չէք ուզում բժշկւել ներվային ասացէք ինչո՞ւ ինչո՞ւ չէք ինչո՞ւ չէք ինչո՞ւ մէր բարի և ահրանդառութիւնից, ինչո՞ւ չէք ինչո՞ւ մէր բարի և ասպինի ամուսնուն:

Այլ ևս չըգիմացայ անամօթ միստիֆիկացիային, այլ ևս անպատկառ կողծիքը բորբոքեց իմ հոգին և ևս այլ ևս անպատկառ կողծիքը բնաւորութիւնն այնպէս, ինչ նկարագրեցի Միքայէլի բնաւորութիւնն այնպէս, ինչ նկարագրեցի կար իրապէս:

մուսնը գէպի ինձ: Բայց ոչ բոլորը, ոչ բոլորը, սիրելիս, վասն զի դարձեալ պատասիրութեան զգացումը ստիպեց ինձ թագցնել շատ բաներ:

—Այդպէս է, ուղեմն, մա, —արտասանեց տիկին Տարատինօվան ինձ լսելուց յետոյ, —ահա թէ ինչ: Այս, այս, դժւար է ճանաչել տղամարդկանց նրանց արտաքին կեանքից:

Մի օր Միքայէլը ինքնարերաբար խոստացաւ ինձ համար պատւիրել մի նոր հագուստ:

—Շնորհակալ եմ, սիրելիս, —ասացի ես հեզնօրէն, —այդ մի մեծ վեհանձնութիւն է քո կողմից: Բայց ես վախենումեմ, որ իմ ճաշակը մի փոքր թանգ արժենայ քեզ:

—Փոյթ չէ, թող թանգ արժենայ:

Մենք միասին գնացինք գերձակուհու մօտ: Ես ջոկեցի մի ընտիր կտոր: Տասն օրից յետոյ հագուստս ստացայ, նրա հետ և հաշիւը: Պէտք էր վճարել մի ոչ այնքան ծանր գումար—125 ռուբլիս իմ հագուստների սովորական միջին արժէքը:

Բայց Միքայէլը սարսափեց, երբ նայեց հաշւին: Նա գուրս բերեց գրպանից 50 ռուբլի և, դնելով սիւդանի վրայ, ասաց.

—Ես միայն այսքանը կարող եմ տալ: Մկանակի մասին դնել հոգա...

Եւ այսպէս, նրա առաջին և վերջին, նրա միակ նւէրն էլ եղաւ իմ փողերով:

—Տիկին, —դարձաւ ինձ մի օր մեր խոհարարուհին, —ինչո՞ւ է պարոնն այդպէս խիստ վարւում ձեզ:

—Այդ ձեր գործը չէ:

—Այս, իմ գործը չէ, ի հարկէ: Բայց ես ցաւում եմ: Զէ՞ որ ես էլ կին եմ: Նա ձեզ զրկում է ամեն բա-

նից: Այս տանը ես ձեզնից աւելի իրաւունքներ ունիմ: Ոչ, տիկին, զուր էք թագցնում, դուք անբաղդ էք:

## IX

Վերջին ժամանակներն ես սկսեցի այցելել օպերային թատրոնը և ակումբը: Ոչ յաճախ, այլ մերթ ընդ մերթ: Գիտէի, որ գա Միքայէլին հաճելի չէ, բայց և այնպէս այցելում էի: Ոչ մենակ, հարկաւ:

Ներս էինք մանում թատրոն կամ ակումբ թէ չէ, Միքայէլը անմիջապէս ինձ թողնում էր մենակ և մօտենում ուրիշ կանանց:

Մի անգամ նա մօտեցաւ կարմիր մազկրով մի հասաւ կնոջ, որ մինչև նրա մերձնալը մեն մենակ կանգնած էր և աջ ու ձախ շանթալի հայեցքներ էր ձգում:

—Ո՞վ էր այդ կինը, —հարցրի ես մի ժամ անցած, երբ նա բարեհաճեց մօտենալ ինձ:

—Բարօնուհի Միլհաուզէնը, —պատասխանեց առանձին պարծանքով, —Պէտքը բուրգում ահազին կապեր ունի: Շատ հարուստ կին է:

—Բայց դու ինչ կազ ունիս նրա հետ: Ուզում եմ նրա միջոցով Մայկօպում նաւթաշողեր վերցնել կապալով:

—Զարմանալի է, —ասացի ես հեգնօրէն, —որ ամբողջ երեկոյ այդ ահազին բազմութեան մէջ ոչ ոք մօտեցաւ այդ ահազին կապեր ունեցող բարօնութեան, բացի քեզնից:

Մի շաբաթ անցած մենք գարձեալ օպերայումն էինք: Այստեղից գնացինք լլուր ընթրելու: Հաղիւ սեւինք: Այստեղից գնացինք լլուր ընթրելու: Հաղիւ սեւինք: Այստեղից գնացինք լլուր ընթրելու: Հաղիւ սեւինք:

—Մինա, —դարձաւ ինձ Միքայէլը, —և ուզում  
եմ նրան էլ հրաւիրել:

Մեղ մօտ նստած պարոնը վրդովւեց:  
Նա սասց.

—Եթէ այդ կնոջը հրաւիրէք, ես տիկին Մինա-  
յին կը խնդրեմ, որ հեռանայ այստեղից:

—Ինչու, —հարցրի ես:

—Զբգիտեմ բարօնուհի է, թէ կոմսուհի, —պա-  
տասխանեց մեր սեղանակիցը, —գիտեմ միայն, որ ոչ  
մի պատւառը կին չի կարող մի սեղանի քոլ նստել  
մի այդպիսի արարածի հետ:

Միքայէլը շփոթւեց, լրեց:

Մի ուրիշ երեկոյ դրամատիկան թատրոնում  
յանկարծ «Բարօնուհին» եկաւ և նստեց մեր կողքին:

Ես սկսեցի գողալ զայրոյթից: Հէնց որ գործո-  
դութիւնը վերջացաւ, ես Միքայէլին խնդրեցի տեղներս  
փոխել կամ գնալ տուն:

Նա չըկամեցաւ: Ես, շրթունքներս յուզմունքիցս  
կոծոտելով, զսպեցի ինձ մինչև ներկայացման վերջը:

«Բարօնուհին» նայում էր ինձ գրգռիչ հայեց-  
քով: Կարծես, պատրաստ էր որևէ վիրաւորանք հասց-  
նելու:

Բայց ես նրան յառաջեցի:

—Զէիր կարող աւելի վայելուչ սիրուհի ընտ-  
րել քեզ համար, —սասցի ես Միքայէլին այնչափ  
բարձր, որչափ հարկաւոր էր որպէսզի «Բարօնու-  
հին» լսէ:

—Լոիր, —գոչեց նա, —դու չունիս իրաւունք վի-  
րաւորելու մի պատւառը կնոջ:

—Լիբր է քո այդ պատւառը, լիբր, —արտա-  
սանեցի ես միանգամայն կորցնելով ինքն զինքս:

Միքայէլը կարմրեց, կապտեց, ոտքի կանգնեց:

—Ես քեզ հետ տանը կը խօսեմ, —ասաց նա խեղ-  
դւած ձայնով և դուրս գնաց:

Ես մնացի մենակ: Դաւոը հեկեկանքը սեղմեց կո-  
կորդու:

—Հօրաքոյր, մի տիրէք, ոչինչ, զնանք, —լսեցի  
իմ զլիի վրայ մի անուշ ձայն:

Նայեցի յետ: Եղօրս որդին էր տասնութ տա-  
րեկան մի հեղ, պարկեցա պատանի, որին սիրում էի  
իմ կեանքից աւելի: Նա կամեցաւ ինչոր ասել միխ-  
թարել, բայց պատանեկան անզուսպ զգացումները չը  
թողին, և ես նրա աչքերի մէջ նշմարեցի արցունք:

Այդ ժամանակ միայն «Բարօնուհին» վերկացաւ  
և հեռացաւ:

Գալով տուն, ես իմ ննջարանը գտայ տակն ու  
վրայ արած: Միքայէլը մեր անկողնակաները հեռա-  
ցրել էր միմեանցից և իմ բարձերն ու վերմակները  
մի անկիւն շպրտել:

Տեսնելով ինձ, նա կատաղի գաղանի պէս յար-  
ձակւեց վրէս: Եւ ապտակեց...

—Ցաւում եմ, —գոռաց նա, —որ այս ապտակը  
թատրոնում չը տւեցի քեզ, ամբողջ հասարակութեան  
առաջ:

—Դու ինձ աւելի սուր ապտակ տւեցիր այնտեղ:  
Դու ոչ միայն քո ամուսնու, այլև քո իսկ պատիւը չը  
խնայեցիր, մի պոռնիկ կնոջ նստեցներով ինձ հետ  
կողը կողքի: Ահ, անասնական կրքերը այնքան են  
կուրացրել քեզ, որ այլ ես ոչ մի սրբութիւն չի մնա-  
կուրացրել համար: Դու ոչինչ չես աեսնում, ոչինչ չես  
ցել քեզ համար: Դու ոչինչ չես աեսնում, ոչինչ չես  
լսում և ոչ իսկ քո խղճի ձայնը: Ահա թէ ում մօտ ես  
գորչում գիշերները մինչև լոյս և ցերէկները մինչև  
գորչում գիշերները մինչև լոյս և ցերէկները մինչև

ԺԼԱՏՈՒԹԻՒՆԸ: Այդ պոռնիկը կարողացաւ: Այս, այս, դու հերքել չես կարող, քո փողերով են գնուած նրա շքեղ հագուստները, նրա ակնէղնաները, նրա թանգարին զլխարկները ու կօշիկները: Ամբողջ քաղաքն է խօսում այդ մասին: Եւ ամենքը ծաղրում են քեզ, ամենքը զգուում, ամենքը խոյս են տալիս քեզնից ինչպէս բարոյական ժանտախտից: Ախտամոլ, ահա թէ ինչու չէիր ուզում ինձ հետ պատւառը ընտանիքներ այցելել: Նայիր հայելուն: Միթէ չես ամաշում քո ճերմակ մազերից, քո կորացած մէջքից, քո գէմքի կնճիռներից: Վերջին փողոցային պատանին թոյլ չէր տալ իրան այն, ինչ որ զու թոյլ տւեցիր քեզ այս երեկոյ: Ահ, ձգել մի աղնիւ կնոջ պատւասիրութիւնը մի պոռնիկի կօշիկների տակ, Աստուած իմ, կարող է լինել աւելի մեծ անկում: Գնա, հեռացիր աչքիցս, գնա քո սիրունու մօտ, վայելիր նրա վաճառքի դուրս բերւած փաղաքշանքները, վայելիր ամենայն ազատութեամբ, ամենայն իրաւամբ, վասն զի նա է քո ընկերը և ոչ ես, նա է քեզ արժանի և ոչ ես: Ահ, բաւական է որքան շահագործեցիր ինձ անասնաբար: Էլ ինչ ես ուզում ինձնից, Էլ ինչ կարող եմ տալ քեզ: Այլ ևս ոչինչ չըմնաց իմ մէջ, ոչինչ: Գնա, հեռացիր, թոյլ ինձ մեշնակ, անտէր, անպաշտպան, ես քո դատն Աստծուն եմ թողնում:..

Երեկոյ է: Մենք թատրոնի դոների մօտ ենք: Միքայէլը մօտեցել է կասսային տոմսակ գներու: Ես հեռուում կանգնած սպասում եմ նրան: Ասանգուխտների վրայ կանգնած է մի նիշար, շիկաներ կին սոկորութ դէմքով, փոքրիկ, խորն ընկած աչքերով:

Երբորդական բալերինաներից մէկն է, գեղաւեստի տականքը, որ միշտ պղտոր է:

Մի սպայ անցնում է նրա մօտով և անփոյթ ձևով շպրտում է հետևեալ հարցը.

—Որսի՞ էք սպասում:

Բալերինան բարկացած երեսը մի կողմն է դարձնում: Վերջապէս, Միքայէլը գնում է տոմսակները, մօտենում է և, ըստ իւր ասիական սովորութեան, ինձ յետ է թողնում և առաջ վազում: Բայց, նկատելով բալերինային, յանկարծ կանգ է առնում, թողնում է, «ը լերինային, յանկարծ կանգ է առնում, թողնում է, որ

ես առաջ գնամ իրը թէ քաղաքավարութիւնից զրդւած: Բալերանալով սանդիմտով, ես յետ եմ նայում և ինչ եմ տեսնում: Կոպիտ ասիացին թեքւել է և համբուրում է բալերինայի ձեռը: Այն կնոջ, որ «որսի էք սպասում»:

Ես գնում էի ամեն տեղ, ուր ինձ բարեհաճում էր տանել Միքայէլը: Գնում էի, որովհետև զգում էի հասարակութիւն տեսնելու անզսպելի կարիք:

Տեղական ակմբում շաբաթը մի անգամ դիմակահանդէսներ էին լինում: Նրանց սովորական յաճախորդներն էին աղախիններ, խոհարար ու խոհարարունիններ, սպասաւոր ու դայեակներ, կարանող ու լուացք անող կանայք:

Պարում էին, թոչկոտում, բալերաձայն խօսում, տափակ և շատ անգամ ցինկի զւարձախօսութիւններ անում: Վերջը կանայք, մի մի «կավալերի» թևը մտած, քաշում, տանում էին նրանց սեղանատուն:

«Կավալերներն» իրանց «դամաներին» սովորաբար հիւրասիրում էին... խորովածով:

Մի օր ես հետաքրքրեցի տեսնել այդ դիմակահանդէսներից մէկը, հարկաւ, ամուսնուս սիրած մթնուրտին ծանօթանալու նպատակով: Միքայէլը տարաւ, կարծում եմ, չափազանց զղջաց:

Բանն այն է, որ այդ երեկոյ խեղճ մարդն իմ

ներկայութեամբ իւր սքանչելի բալերինայից ստացաւ բարոյական հարւած: Բալերինան նստած էր սեղանաշտանը մի երիտասարդի հետ:

Ընթրում էին և գւարթ գւարթ խօսում: Միքայէլը մի անգամ բարեեց նրան գլխով, պատասխան չը ստացաւ, երկրորդ անգամ բարեեց, պատասխան չը ստացաւ, դարձեալ բարեեց, նոյն անաջողութիւնը: Զայրոյթից սկսեց շանթալից հայեացքներ ձգել իւր Դուլցինէայի վրայ—դարձեալ նոյնը:

—Օօ, բարեկամս,—ասացի ևս կէս դառնութեամբ և կէս կատակով,—ծերացել ես, շատ ես ծերացել, այլ ևս կանայք քեզ վրայ ուշադրութիւն չեն դարձնում:

Այգիներում, ժատրոններում, ակումբներում նա շարունակ համբուրում էր սրա ու նրա ձեռք: Երբ հարցնում էի ովքեր են այդ կանայք, դուրս էր գալիս, որ մէկը նշանաւոր ֆաբրիկանտի աղջիկ է, միւսը ժեներալի թոռը, մի երրորդը մինիստրի քրոջ դուստր, չորրորդը իշխանուհի, հինգերորդը կոմսուհի և այլն և այլն, բոլորն էլ մէծամեծ գերդաստանների զաւակներ:

Եւ Միքայէլի այդ ակնյայտ սուտն էր, որ ինձ ամեն բանից աւելի զայրացնում էր:

Ծանօթներս ինձ կարեկցում էին, և այս ինձ վիրաւորում էր խորապէս: Շատերն էլ ինձ կշտամբում էին, որ Միքայէլի այդ բոլոր հրապարակային վիրաւորանքները տանում եմ հեղութեամբ:

Ոչ ոք չըգիտէր, թէ ինչ սոսկալի դրամա է կատարում իմ մէջ, որովհետեւ ես ոչ ոքի չէի պատմում իմ կրածները:

Մի օր ես դարձայ Միքայէլին.

—Լսիր, դու ինձ մի անգամ վարակել ես քո ախտով, բժշկւել եմ և լիովին առողջացել: Բայց ես մտադիր չեմ երկրորդ անգամ վարակւելու:

—Լսիր, —գոչեց նա, ոտը ուժգին յատակին զարկելով, —ես ապականուած կանանց հետ չեմ կապւում: Այն կանայք, որոնց ես ճանաչում եմ, ամբողջ գլխով բարձր են քեզնից:

—Դա ինձ բնաւ չի վիրաւորում, որովհետև քո կարծիքն ես արհամարհումեմ հոգոյս ամբողջ թափով: Բայց կըփափակէի իմանալ, ի՞նչ կասէիր, եթէ ես անէի գէթ մի հարիւրերորդականը քո արածների: Զէ որ ես քեզանից աւելի երիտասարդ եմ և աւելի առողջ:

—Արա դու էլ նոյնը, ինչ որ ես եմ անում: Ես քեզ չեմ արգելում:

—Ահ, ուրախութեամբ կանէի, եթէ կարողանայի: Այն ժամանակ գուցէ դու ոտներիս տակ սողայիր, և ես քեզ թոյլ չըտայի իմ կօշկի ծայրն անգամ համբուրելու: Բայց, դժբաղպարար, անընդունակ եմ անելու: Յաւումեմ, բիւր անգամ ցաւում, որ այսպէս եմ ծնւել որ բնութիւնը իմ կրծքի տակ գրել է մի զգայուն սիրտ և արթուն խիզճ: Շատ լաւ, թող այդպէս լինի, շարունակիր քո զեղսութիւնները, ընդարձակիր քո անառականի արա, ինչպէս ուրիշներն են անում: Խնայիր զաղանի արա, ինչպէս ուրիշներն են անում:

—Ամեն ոք ինքն է պատասխանատու իւր մասին: Ոչ մի մարդ չունի իրաւունք իմ անհատական կեանքի մէջ խառնելու:

## X

Մի բան ևս նկատում էի այդ միջոցներին՝ այն է, որ Միքայէլը դէպի տիկին Տարատինօվան ևս ան-

տարբեր չէ: Նա շարունակ տեղի ու անտեղի յիշում էր. նրա անունը մի առանձին սիրով, նոյն խակ ոգևորութեամբ: «Եկատերինա Պավլօֆսան խելօք կին է, կըրթւած է, ճաշակով է, Եկատերինա Պավլօֆսան այս ասաց, այն ասաց և այն և այն:

Եւ որբան նա յափշտակում էր իւր Եկատերինա Պավլօֆսայով, այնքան աւելի այդ կինը յարգանքով և ուշադիր էր վերաբերում ինձ:

Մանեօվը պարզ էր, և ես շատ անփորձ պէտք է լինէի, որպէս զի խարսէի: Վերջապէս, ինքը Միքայէլը շատ էլ չէր աշխատում թագցնել իւր զգացումները դէպի այդ կինը: Երեկոյթներում ու հանդէսներում նա շարունակ նրա ետելց էր ընկած: Յաճախ ինձ թողնում էր մենակ և նրա հետ անհետոնում: Ընթրիքների միջոցին սեղանի քով միշտ նրա մօտ էր նստում և կատարում էր նրա բոլոր հաճոյքները:

Պատահում էր, որ տիկին Տարատիխօվան հրաժարում էր ընթրելուց: Այդպիսի երեկոներին մենք տուն էինք վերադառնում քաղցած:

Երբ մեզ ճաշի կամ երեկոյթի էին հրաւիրում մի տեղ, միշտ Միքայէլը որ և է պատրուակ էր գտնում ինձ հետ կուելու որպէս զի ես չըգնամ, որպէս զի ինքն աղատ վայելէ իւր սիրունու ընկերութիւնը:

Տանտիկինների հարցին, թէ ինչու ես նրա հետ չեմ, նա մի պատասխան ունէր.

—Ախ, տիկին, ամուսինա ներվային հիւանդ է, խոյս է տալիս հասարակութիւնից:

Զըգիտեմ կային նրա խօսքին հաւատացողներ թէ բայց համոզւած եմ, որ ով ծանօթ էր իմ կենսախինդ բնաւորութեանը, անշուշտ ծաղրում էր նրան իւր հոգու խորքում:

—Եսթաղբենք, թէ դու չես ստում,—ասացի ես

մի օր,—որ ես իրօք ներվային եմ, բայց միթէ այդպէս են վարւում ներվային կնոջ հետ:

Այս ասելիս ես դաշնամուր էի նւազում: Միքայէլը մօտեցաւ և դաշնամուրի կափարիչը ձգեց, ասելով.

—Դադարիր, դու գլուխս ցաւեցնում ես:

Տեսնում ես, ես չունէի իրաւունք երաժշտութեամբ անգամ զբաղելու իմ տանը և ինձ համար:

Եւ ամեն անգամ երբ ինձ տեսնում էր նւազեցնամուրը փակում էր և բանալին հետը տանում:

Նոր տարին նա հանդիպեց կլուբում: Ես խնդրեցի, որ ինձ էլ տանէ հետը, մերժեց, ասելով.

—Այստեղ ընդունւած չէ, որ կանայք կլուբում հանդիպեն նոր տարին:

—Գիտեմ,—գիտեցի ես,—միայն քո կնոջ համար չէ ընդունւած այդ: Լաւ, գնա և վայելիր կեանքը ուրիշների հետ:

Եւ մացի տանը մենակ, տիուր: Վերադառնաւ նա այնտեղից լուսաբացին... հարբած: Հազիւ կամեցայ մի քանի կծու խօսքեր ասել, յարձակեց վրէս և... ինձ ծեծեց:

Այլ ևս նրա ձեռքը սովորել էր ինձ վրայ բարձրանալու:

Այդ օրերին ձեռքս ընկաւ հրէայ վարժուհու մի նոր նամակը փոստից:

—Քո Ռախսան տիրում է առանց քեզ, —ասացի Ես, նամակը կարդալուց յետոյ, շպրտելով սեղանի վրայ:

—Ուրեմն դու դարձեալ բաց ես անում իմ համակները ու կարդում:

—Այս, և միշտ կարդալու եմ:

Հրէուհին գրում էր. «Բարե Միքայէլ: Ես ձեզ սպասում էի տօներին: Զեկաք, Յաւում եմ: Անգութ մակատագիր, ինչու մեղ չի վիճակւած միւնոյն քա-

զաքում ապրել: Եթէ ձեզ հետաքրքրում է իմ կեանը, ահա նա երկու խօսքով: Այժմ ես դասեր ունիմ տեղ-  
ոյս Առևտրական գպրոցի վերատեսչի շնորհով և վաս-  
տակում եմ ամսական 40 ռուբլի: Քիչ է, բայց ես  
գոհ եմ: Գոհ եմ, որովհետև բոլորովին առողջացել եմ:  
Ժամանակ տխուր չի անցնում: Ունիմ մի քսնի ծա-  
նօթ ընտանիքներ, որոնք ուրախ են ինձ ընդունելու:  
Թատրոն այցելում եմ երբեմն միայն: Զարմանալի է,  
չէ՞, ձեր Ռախիսայի կողմից: Ինձ հետամուտ են մի քա-  
նի երիտասարդ պարոններ, բայց ես ոչ ոքի վրայ  
ուշադրութիւն չեմ դարձնում, որովհետև ոչ ոք ինձ  
չի հետաքրքրում: Ես յիշում եմ ձեզ և միայն ձեզ:  
Նախանձում եմ երբ փողոցներում հանդիպում եմ փո-  
խաղարձ սիրով կապւած դոյզերի: Ես ինքս ամաչում  
եմ իմ զգացումից: Միթէ ձեր Ռախիսան երիտասար-  
դացաւ: Անցեալ օրն ինձ մօտ էր ուսուցչի Պիկուլինը:  
Միասին յիշեցինք ձեզ, ձեր գործունէութիւնը: Բայց  
բաւական է: Քիչ եմ գրում այս անդամ, որպէս զի  
դուք շատ գրէք և որպէս զի յետոյ ես էլ աւելի գրեմ:

«Սպասում եմ անհամբեր ձեր նամակին:

Ձեր Ռախսա

—Լիացար, —գոչեցի ես, երբ Միքայէլը հրէունու  
նամակը լուռ կարդաց և վերջացրեց: Դէս, ահա քեզ  
թուղթ ու գրիչ: Գրիր, որքան կամենաս, մի տանջիր  
խեղճ հրէունուդ, մի տանջիր, խեղճ է:

—Լոիր, բաւական է: Ես այդ հրէունով քնառ չեմ  
հետաքրքրում: Ես նրա նամակին անդամ չեմ պա-  
տասխանիլ:

— Երկաւ, նա ստեց, հարկաւ, պատասխանեց: Եւ  
շատ չանցած՝ ձեռքս ընկաւ հրէունու երկրորդ նամակը:  
Սիրելիս, դու կարող ես չըկարդալ այդ նամակը  
կամ կարդալ ու ձանձրանաւ, բայց ես նրան առաջ

պիտի բերեմ ամրողովին, վասն զի դա ինձ մի ա-  
ռանձին հոգեկան հաճոյք է պատճառում:

Ահա նա:

«Բարե, Միքայէլ:

«Ստանալով ձեր նամակը, ես մտածեցի, երկար  
մտածեցի ձեր մասին: Ես յիշեցի ձեր եռանգուլն գոր-  
ծունէութիւնը երբ քաղաքագլուխ էիք: Զարմանում  
եմ, ի՞նչպէս միենոյն անձի մէջ կարող են կից առ  
ապրել երկու իրարու հակառակ յատկութիւններ: Ես  
միշտ ձեզ երևակայել եմ երկաթեայ կամքի տէր մի  
մարդ, որին ոչ միայն առանձին անհատներ, այլև  
ամբողջ մի հասարակութիւն, ամբողջ մի քաղաք ըը-  
կարողացաւ յաղթել որից ամենքը վախենում էին: Մի մարդ  
իր արտաքոյ կարգի խելքով ամենքից բարձր,  
ամենքից գորեղ և ոչ մի խոչնդուսի առջև կանգ  
չառնող: Եւ ահա այդպիսի մի մարդ կախւած է մի  
կոսջից և այնպէս, որ չի կարող ինքն իրան իշխել,  
չի կարող ունենալ սեպհական ցանկութիւններ և, որ  
չի կախաւորն է, կախւած է մի կնոջից, որ շատ սահմա-  
նափակ խելքի տէր է:

«Այս, ի՞նչպէս են այս երկու հակասութիւնները  
ապրում մի մարդու մէջ: Չէ՞ որ նրանք կարող են  
հաշտւել միայն այն ժամանակ, երբ կայ զօրեղ փո-  
խաղարձ սէր: Գուցէ այդ տարօրինակ երկոյթը բա-  
ցադրել անախորժութիւններից խոյս տալու ցանկու-  
թեամբ: Բայց, հաւատացէք ինձ, կոչնչացնէք մի պատ-  
ճառ, կըգայ մի ուրիշը և անվերջ: Չէ՞ որ ես ինքս ե-  
ճառ, զիգայ մի ուրիշը և անվերջ: Կամ մի միենոյն վիճակում երբ ապրում էի ամուսնուս  
զել եմ միենոյն վիճակում երբ ապրում էի ամուսնուս  
հետ: Թէ դուք ձեր ամուսնութեան օրից սկսած, ոչ  
մի տօն չէք անցկացրել առանց անախորժութիւնների  
—այդ ինձ համար այնքան հասկանալի է, որքան ե-

բևակայէլ չէք կարող, վասն զի նոյնն էի և ես: Մերթ մարդուս վատ տրամադրութիւնն էր խանգարում, մերթ նա չէր կամենում զնալ այնտեղ, ուր ես էլու կամենում զնալ, մերթ նրան թւում էր, որ ես մէկի հետ խօսում եմ չափազանց շատ, իսկ միւսի հետ, ընդհակառակը, չափազանց քիչ: Մերթ այս, մերթ ան և այսպէս անվերջ: Սակայն երբ այդ բոլորն ինձ ձանձրացնում էր, ես այլ ևս ուշագրութիւն չէի դարձնում և վարւում էի այնպէս, ինչպէս ես էի կամենում: Այո, անախորժութիւններ լինում էին, բայց ես իմ ցանկացածն էի անում:

«Դուք ասում էք, որ ես անցեալս չըյիշեմ, դուք ենթադրում էք, որ ես ցաւում եմ իմ դժոխային շղթաների մասին, կարօտում եմ իմ ամուսնական փաղաքանքներին: Օօ, ոչ, հազար անգամ ոչ, ես միայն այժմ եմ ապրում, միայն այժմ եմ զգում ինձ մարդ, որովհետեւ միայն այժմ եմ ես իմ «եսի» տէրը, անկախ, ինքնազլուխ: Ես միայն ցաւում եմ առհասարակ իմ խորտակւած կեանքի մասին, ցաւում եմ, որ մի փոքր ուշ փշրեցի իմ շղթաները, որ ես երկար ժամանակ խղճացի մի մարդու, որ օքնաւ ինձ չէր խղճում: Ճշմարիտ է, ես այժմ մենակ եմ, բայց միթէ ես մենակ չէի երբ նրա հետ էի և միթէ այն ժամանակ իմ մենութիւնը աւելի թեթէ՞ էր: Օօ, ոչ:

«Տօներն ես անցկացրի ոչ ուրախ, ոչ տխուր: Գրեթէ ամեն օր լինում եմ կամ ծանօթներիս մօտ կամ թատրոններում ու երեկոյթներում: Նոր տարին հանդիպեցի մը ծանօթ ընտանիքում, ուր մնացի մինչեւ առաւտեան 4 ժամը: Յետոյ օթօմօքիլնելսկ խմրովին գնացինք զրօսնելու: Բայց այդ գիշեր ես տխուր էի առանձնապէս:

«Նոր տարի օրը ես ստացայ ծաղիկներ և շատե-

րը եկան ինձ շնորհաւորելու: Առհասարակ ես շատերի հետամտութեան առարկան եմ, սակայն ես զիտեմ ողամարդկանց արմէքը: Զէ՞ որ այլ ևս դժւար է ինձ հրապուրել զեղեցիկ լնչացքներով և հաճոյախօսութիւններով: Մի անհատ ինձ առաջարկեց խաղաղ ընտանեկան երջանկութիւն: (Յիշմամ էք լ. Անդրէեվի պիեսը «Մեր կեանքքի օրերը»): Մերժեցի:

«Մի ժամանակ ես էլ սիրում էի այն քաղաքը, ուր ապրում էք դուք: Բայց ոչ մի քաղաքի վարք ու բարքերը այնքան ապականւած չեն, որքան այդ քաղաքի: Իսկ կանայք...

«Դուք կարծում էք, որ մենք մինչև ամառ չենք տեսնեիլ, իսկ ես զգում եմ, որ եթէ մենք կամենանք, կարող ենք տեսնել... բարեկենդանին: Յամենայն կէպս, ես երկու օր ազատ եմ լինելու: Եթէ դուք բուդէպէս չէք կարող գալ, այդ գէպքում ես կըգամ, եթէ, հարկաւ, ձեզ համար այդ անյարմար չի լինիլ: Բայց թողնենք առ այժմ, ով գիտէ մինչև այդ ժամանակ ինչեր կըկատարւին:

«Ներկայումս ես վաստակում եմ ամսական 90 րուբլի, որ ինձ բաւական է: Գոհն էք, արդեօք, ինձնով: Ասսացէք բացարձակ, շատ են ձեզ ձանձրացրել իմ նամակները: Եթէ այո, այլ ևս չեմ զրիւ: Դուք ինձ խորհուրդ էք տալիս վերցնել կեանքից ինչ-որ կարելի խորհուրդ էք տալիս վերցնել կեանքից ինչ-որ կարելի սուղդ եղէ...»

Նամակն անստորագիր էր, բայց միթէ պիտի ստուրագրւէր, որ հեղինակին ճամար: Զէ՞ որ ես ձեզ համարում եմ իմ անկեղծ բարեկամը: Եւ կարծեմ չեմ սիսաւում: Առողջ եղէ...»

Կարգացի նրան ծայրէ իծայր և զգւանքով շը-

պրտեցի Միքայէլի երեսին։ Նա ոտքի թռաւ բորբոքած, աչքերը վառած, բռունցքները սեղմած։ Բայց այլ ևս երկիւղ չունէի նրանից։

—Ահ, երկչուտ, —գոչեցի ես, աղատութիւն տալով իմ սրտի մէջ տարիների ընթացքում կուտակւած թոյնին, —երկչուտ, միթէ չես կարող քո անթիւ հոմանիներից գէթ մէկի մօտ լինել անկեղծ։ Ինչու չես զըրում, որ բիւր անգամ խնդրել եմ քեզ աղատել ինձ և քեզ, չը թունաւորել քո երջանիկ կեանքը, ինձ հետ մի յարկի տակ ապրելով։ Ինչու չես զըրում, որ քո բոնակալ բնոյթը կարիք ունէ մի ստրկունու, որի գըլին թափես քո հոգու մաղձը այն ժամերին, երբ քո հոմանիները իրանց տան գռներն են ցոյց տալիս քեզ, երբ նրանք քո ճերմակ մաղերը ներկում են թուրով և հայհոյանքներով։ Այո, քո հրէուհին ունէ իրաւունք ինձ յիմար անւանելու։ Միթէ եթէ յիմար չը լինէի, կը հաւատայի քո ջերմ երգումներին, քո սիրային կը բակոտ խոստովանութեանը։ Միթէ եթէ յիմար չը լինէի, չէի տեսնել քո սև հոգին սև մորթուդ տակ։ Միթէ եթէ չը լինէի յիմար, իդէալիստի և գաղափարականի դիմակի տակ չէի նկատի մի ողորմելի քաղցած գայլ, որ իւր ճանկերը ծածկել էր բամբակով որպէս զի կարողանայ ինձ մերձենալ։ Միթէ եթէ յիմար չը լինէի, չէի զգալ, որ բորենին լալկան է երբ սոված է և դաժան, երբ արդէն կշացել է։ Ոհ, վախկոտ, քո ամբողջ ոյժը քո բիրդ բռունցքների մէջ է, որոնց այնալիս սեղմել ես և որոնք պատրաստ են մի անգամ ևս իրանց զօրութիւնը փորձելու եմ քնքոյշ մարմնի վրայ, իսկ իմ ոյժը իմ հեղութեան, իմ խոնարհութեան, պարկեղտութեան, իմ ամօթի և պատւասիրութեան մէջ է։ Շարունակիր, շարունակի՞ր քո ստերը, կեղտերը, քո անառակութիւնները։ Ես տասն և ութ-

տարի համբերել եմ և գեռ ոյժ ունիմ էլի համբերելու, որովհետեւ հէնց այս անվերջ համբերութեան մէջ եմ զգում սփոփանք, նոյնիսկ հոգեկան հաճոյք, նման այն հաճոյքին, որ զգում էին միջնադարեան քրիստոնեաները իրանց խղճի համար ինկվիզիցիայի ենթարկելիս։

—Նայիր քեզ հայելու մէջ. մագերդ ճերմակել են, գագաթդ լերկացել է հնդկական ընկոյզի պէս, ուսերդ, ցած են իջել անառակ կեանքի ծանրութեան տակ, երեսդ թորշոմել է աշնանային տերեկի պէս, նրա կընճիները չորացել են, կոպերդ ուռել են, բիերդ կարմըրել անքուն գիշերներից։ Ի՞նչ մարմնաւոր աղաւամըրել հոգեկան և բարոյական քայլքայման հետ։ Ի՞նչ զում հոգեկան և աղաւամըրեան այս մարմներն ինձ քեզ հետ։ Տասն հոգակութիւն։ Նայիր և համեմատիր ինձ քեզ հետ։ Տասն և ութ տարւայ քո անողոք հալածանքներն ինձ այնքան չեն մաշել, որքան մաշել են քեզ քո գւարճութիւններն այս կարճ միջոցում։ Միթէ չը գիտես, որ թիւներն այս կարճ միջոցում։ Միթէ յիմար սրաւական է, որ ես ցանկանամ և տասնեակ երիտասարդներ կը սողան իմ ուսների տակ և կենթարկեմ սրաւական է, որ ես ցանկանամ և տասնեակ եմ, իսկ քեզ անհուն տանջանքների։ Այո, ես յիմար եմ, իսկ գու խելօք, ես անզօք եմ, իսկ գու զօրաւոր։ Բայց ես բարոյական եմ, գու անբարոյական, ես անարատ եմ, զու բաղմարատ։ Եւ ես ուզում եմ մնալ այն, ինչ որ զու բաղմարատ։ Եւ ես ուզում եմ մնալ այն, ինչ որ կամ և եղել եմ և, ապրելով քեզ հետ, զգում եմ քեզնից։

## XI

Իմ մէջ մի չար միտք ծագեց. քանի որ ես, առողջ լինելով, հասարակութեան մէջ վայելում եմ ներկային կոչով հոչակ Միքայէլի շնորհով, հապա ինչու վայուց չը տամ այդ մարդուն, թէ ինչ ասել է ներկային կին։

Եւ վճռեցի ցոյց տալ։

Նախ և առաջ ես դիմեցի մի փաստաբանի, որ Միքայէլի բարեկամներից մէկն էր: Կեանքս նկարագրեցի ամենամռայլ գոյներով, բաց արի մեր բոլոր ընտանեկան գաղտնիքները, ցոյց տւեցի պատւարժան ամուսնուս սիրային նամակները: Եւ խորհուրդ հարցրի, ի՞նչ անել:

Փաստաբանը լսեց ինձ ամենայն ուշադրութեամբ և, երբ խօսքս վերջացրի, ասաց.

Դուք կամենում էք ձեր ամուսնուց բաժանւել, այնպէս չէ:

—Ոչ:

—Հապա ի՞նչ էք կամենում:

—Ոչի՞նչ:

Փաստաբանը նայեց երեսիս զարմացած, միենոյն ժամանակ, անսախորժ հիասթափւած, որ զրկւեց մի գործից: Ես վճարեցի փաստաբանին, վերկացայ և առանց մի խօսք աւելացնելու դուրս գնացի, զիտմամբ գրասեղանի վրայից մի քանի թղթեր ձգելով յատակի վրայ և ոտներիս տակ տրորելով:

Նոյն օրն երեկոյեան ինքս իմ արածը պատմեցի Միքայէլին, ծիծաղելով ներվային ծիծաղով:

—Դու խելագարւում ես,—ասաց նա:

—Ոչ, սիրելիս, ես ներվային եմ:

Ես արտագրեցի հրէայ վարժուհու վերջին նամակն և ուղարկեցի Ռ.... քաղաքի առեւտրական դրաբոցի վերատեսչին, որի միջոցով նա դասեր էր գտել: Ես խնդրեցի վերատեսչին, որ այդ նամակը հասցնէ հրէուհուն, աւագնելով, որ ինքս չը գիտեմ նրա հասցէն, թէև շատ լաւ գիտէի: Միենոյն ժամանակ, մի ուրիշ նամակ ուղարկեցի մի ուսուցչի, որի հետ հրէուհին լաւ ծանօթ էր, և խնդրեցի նրան յայտնել իւր բարեկամուհուն, որ վերատեսչի մօտ նամակ ունէ: Այս

մեքենայութեան հետեանքն այն եղաւ, որ հրէուհին զրկւեց դասերից և ստիպւեց Ռ.... քաղաքից հեռանալ ամօթահար:

Միքայէլն իմացաւ իմ արածը և ասաց.

—Դու խելագար ես:

—Ոչ, սիրելիս, ես ներվային եմ:

Պատմեցի, որ Միքայէլը ստիպւած էր գործերով Փետերըուրդ գնալու: Ես պահանջեցի, որ ինձ էլ հետը ատանէ: Միբժից: Ես ճշացի, գոռացի, աղաղակեցի, ուշաթափւեցի, արթնացայ, նորից ուշաթափւեցի, վերջապէս, գնացի Պետերըուրդ:

Այստեղ Միքայէլը ինձ թախանձեց դիմել որևէ նշանաւոր բժշկի օգնութեան:

—Ինչո՞ւ դիմեմ,—հարցրի ես:

—Որովհետեւ հիւանդ ես:

—Բայց ի՞նչ ասեմ բժշկին:

—Ասա, որ, ասա որ... ներվային ես:

—Ոչ, սիրելիս, ես կասեմ, որ խելագար եմ:

—Եւ կընաւատայ:

—Աւելի լաւ ինձ համար:

Գնացինք մի յայտնի պլոֆեսուրի մօտ Միքայէլի հետ միասին: Մտանք ներս թէ չէ, ևս անմիջապէս լկնեցի գանգատել Միքայէլի դէմ: Ասացի, որ նա աւագնեցի վայրենի և այլն և այլն: Վերջն աւելացրի, թէ պէս վայրենի և այլն և այլն: Վերջն աւելացրի, թէ նա այնքան խիել է գլխիս: Որ խելքս կորցրել եմ:

Պրոֆեսուրը նայեց աչքերիս, զննեց խորհրդաւոր, մտածեց և ապա, զամնալով Միքայէլին, ասաց.

—Պարոն, ձեր ամուսինը սաստիկ ներվային հիւանդութիւն ունէ: Նրա համար անպայման հանգըս-

տութիւնն անհրաժեշտութիւն է: Դուք պէտք է շատ լաւ վարւէք նրա հետ:

Միքայէլն ամօթից կարմրեց, ոչինչ չասաց:

Երբ փողոց ելանք, նա փորձեց ինձ նախատել. բայց ես ասացի թէ այնպիսի մի միջ կարձակեմ, որ անցորդներն անմիջապէս կանգ կառնեն և մեզ կը շըրջապատեն: Ես, իհարկէ, այդ չարի, բայց Միքայէլը վախեցաւ և լոեց:

Ճանապարհին ես պահանջեցի, որ նա ինձ համար ծաղիկներ գնէ, ապա թէ ոչ կուշաթափւեմ և կը ընկնեմ մայթի վրայ:

Նա վախեցաւ և խոստացաւ գնել: Ես նրան մի ամբողջ ժամ չարչարեցի մինչև որ գտայ ամենաընտիր խանութը ծաղիկների:

Մտանք ներս, ես հրամայեցի կազմել մի շատ մեծ փունջ ամենաթանգարին ծաղիկներից: Միքայէլը գունատեց, բայց նայեց աչքերիս, վախեցաւ, լոեց և վճարեց արդէքը...

Դուրս եկանք փողոց թէ չէ, ես սկսեցի ծաղիկները մէկիկ մէկիկ պոկել փնջից և դէն ձգել: Տուն հասնելիս ձեռքումս մնաց միայն մէկը:

—Ինչո՞ւ փշացրիր այդ թանգարին փունջը:

—Քէֆս այնպէս ուղեց:

—Բայց դա խելագարութիւն է:

—Ոչ, սիրելիս, ներվայնութիւն է:

Եւ այսպէս, ես նրան տանջում էի և հաճոյք զգում:

Այժմ նա ինձ հետ չէր համարձակում կոպիտ ըրեւել:

Սակայն, Պետերը որպէս վերադառնալով, ես պատահամը մի օր իմացայ մի սոսկալի բան: Ինձ ասա-

յին, որ Միքայէլն աշխատում է ինձ հոգեկան հիւանդների բուժարան ուղարկել:

Ես սթափիւցի և վճռեցի պաշտպանուել: Զգացի, որ հիւանդանոցն ինձ համար գերեզման է դառնալու:

Ինձ փրկեց մի դժբաղդ դէպք—հիւանդութիւնը մեծ եղբօրս որդու, որ նոր էր աւարտել գիմնազիօնը: Բժիշկների խորհրդով ես նրան տարայ Զւիցերիտ: Միքայէլն ուղեկցեց մեզ:

Եւրոպայում կրկնեց նոյնը, ինչ որ մեր առաջին ճամբորդութեան միջոցին: Ես առողջացել էի, իսկ Միքայէլն աւելի կոպտացել, աւելի ժլատացել, աւելի անառակացել:

Բժիշկներն եղբօրս որդու վիճակը գտան վտանգաւոր և խորհուրդ տուեցին թողնել հիւանդին Զւիցերիտայում:

Ես նրան տեղաւորեցի սանատօրիայում և վերադանչք:

Ճանապարհին, չեմ յիշում որ երկրում մեր կուպէն մտան երկու երիտասարդ օրիորդներ իրանց եղանակին: Միքայէլը հստած էր իմ դէմ ու դէմ: Քարոզ հետ: Միքայէլը նստած էր իմ դէմ ու դէմ: Քարոզ համար միջին սոսկեկներին և ինքը նստէ իմ մօտ: Բայց նա բարւոք համարեց նեղւել օրիորդների մօտ և բայց էլ նեղւել: Երբ ես այդ մասին նրան նկատունրանց էլ նեղւել:

—Այստեղ աւելի հաճելի է ինձ համար:

Բանն այնտեղ հասաւ, որ օրիորդները կանչեցին կօնդուկտօրին և խնդրեցին իրանց ուրիշ սեղ տալ և եկան մեր կուպէից, մի արհամարհական հայդուրս եկան մեր կուպէից Միքայէլի վրայ: Մի հայեացք, որ նետի պէս վիրաւորեց իմ ինքնասիրութիւնը:

Վերջապէս, հասանք Միքայէլի պաշտօնավայր

քաղաքը: Այդտեղ, հարկաւ, վերականգնեցին մեր նախկին յարաբերութիւնները:

Պատմեմ մի զիպւած, որ, կարծեմ, կարող է նոր լոյս սփոել Միքայէլի բարոյական նկարի վրայ:

Հիւսիսից եկել էր մի երիտասարդ, որ խոշոր մասն ունէր այն բանկում, որի տեղական բաժնի կառավարիչն էր իմ պատւարժան ամուսինը:

Մի օր Միքայէլը նըան հրաւիրեց ընթրիքի տեղական նոր բացւած հիւրանոցը: Ներկայ էին և կանայք: Հարկաւ, առաջին տեղն էր բռնում նրանց մէջ տիկին Տարատինօվան: Զարմանալի կը լինէր եթէ այդպէս չըլինէր, քանի որ Միքայէլն այժմ այդ կնոջով էր շնչում ու ալլում:

Հէսց որ նստեցինք սեղանի, հիւսիսից եկած պարոնը աշքերը տնկեց ինձ վրայ և շարունակ նայում էր ինձ: Նա անվերջ ճպտում էր անվայել և ես նրա վավաշու աշքերի մէջ կարդում էի ինձ համար մինչեւ այդ օրը անյայտ յանդկութիւն: Ես ինձ այնքան վատ զգացի, որ մի քանի անգամ Միքայէլին խընդրեցի շուտով տուն վերադառնալ:

—Ինչո՞ւ ես շտապում, —հարցրեց նա:

—Որովհետեւ ինքդ էլ պարզ տեսնում ես, որ այդ պարոնն իւր լկտի հայեացքանը ինձ վիրաւում է, —պատասխանեցի ես հայերէն:

—Հարբած է, ուշագրութիւն մի գարձրու:

—Բայց նա սկզբից և եթ յանդուզն է: Իսկ եթէ հարբած է եկել այստեղ, աւելի վատ:

Միքայէլը կատ զութիւնից շրթունքները կոծուտեց, բայց զսպեց իրան: Ես ուզեցայ մենակ զնալ տուն, բայց անյարմար էր: Եթէ ինդիրը միայն ինձ վերաբերւէր, հարկաւ, ես իմ պատիւը կը պաշտպանէի,

բայց ներկայ էր իմ ամուսինը, հետեաբար շօշափեւում էր և նրա պատիւը:

—Ի՞նչպէս էք հաւանում այդ պարոնին, —շընչաց ականջիս տիկին Տարատինօվան, —դա մեր ամենամօտ ծանօթն է և շատ հարուստ:

—Այն, —հարցրի ես հեղնօրէն:

—Այո, մօտերքս նրա հայրը վախճանեց և ահագին ժառանգութիւն թողեց: Միայն մօտ կէս միլիօն ոռուրի ունէ այն բանկում, որի տեղական բաժնի կառավարիչը ձեր ամուսինն է: Շատ զեզեցիկ երիտասարդ է, այնպէս չէ, բանսատեղծի կամ նկարչի դէմք ունէ:

—Ահ, տիկին, ինձ բոլորովին չի հետաքրքրում ոչ այդ պարոնը, ոչ նրա դէմքը և ոչ էլ մանաւանդ նրա հարստութիւնը, —ասացի ես ձանձրացած և երեսս շուռ աւեցի:

Ես նորից խնդրեցի Միքայէլին շուտով աւարտել ընթրիքը, բայց նա, կարծես, ինձ աւելի զայրացնելու համար, շամպայն պահանջեց: Եւ այդպէս, ես ստիպւած եղայ մինչև գիշերւայ շ ժամը տանել լկտի երիտասարդի ինձ համար արդէն զարշելի սեղանակութիւնը:

Ընթրիքից յետոյ պարոն Տարատինօվն ինձ ասաց, որ Միքայէլը մի որոշ բաժին է ստանում այն գրամագլխի տոկոսներից, որ երիտասարդ պարոնն ունէր պատւելի ամուսնուս կառավարած բանկում:

Ի՞նչպէս ես հաւանում, սիրելիս, նախկին իդէալիստի այդ վարմունքը, ամ:

Յաւիտեան չեմ մոռանալ իմ երրորդ ճամբորդութիւնը դէպի եւրոպա: Ախ, այն ի՞նչ սոսկալի տրամադրութիւն էր, որ պաշարեց ինձ, երբ եղբօրս որդու հեռագիրը ստանալով, ես ուզերւեցի Զւիցերիս:

Նա ինձ կանչում էր իւր մօտ։ Նա, որ իմ միակ մխիթարութիւնն էր, իմ մոզյը հոգու լուսաւոր կէտը։ Նա, որի համար կեանքս չէի խնայիլ։ Ես զգում էի, որ խեղճ պատանու վիճակն աւելի յուսահատական է, քան հեռագրի հաղորդածը։ Եօթ օր շարունակ լալս էր երկաթուղիների վագօններում։ Իմ դառը վիշտը գրաւում էր իմ ուղեկիցների ուշադրութիւնը, որոնք ամեն ժամ փոխում էին կօլէյտօսկօպի պէս։

Տեղ հասայ այն ժամանակ, երբ անբուժելի ախտըն արդէն կատարել էր իւր կործանիչ գերը։ Այլ ևս ոչինչ, ոչինչ չէր կարող օգնել։

Մեռաւ անուշ պատանին, թողնելով տառապեալ հոգուս մէջ յաւիտենական կալիծ, որ երբէք և ոչ մի երջանկութիւն չի կարող ամոքել։

Այլ ևս ոյժ չունէի վերապառնալու դէպի իմ նախկին կեանքը և օտար երկրում, խորթ շրջաններում կրելու այն դառը հալածանքները, որ կրել էի տասնութ տարի շարունակ։

Ես գնացի իմ ծննդավայրը։ Միքայէն էլ եկաւ և, առ ժամանակ հետո մնալով, վերապարձաւ իր պաշտօնատեղը։ Երբէք ամիս անցած ստացայ հետեւեալ նամակը ուսերէն գրւած։

«Ես հոգով համակրում եմ ձեզ, տիկին, որովհետեւ ձեր ամուսինը արդարեւ անարժան ո՞նն է։ Դուք թողիք մենակ (և լաւ արիք), իսկ նա իրան մենակ չի զգում։ Այժմ նա կենակցում է տիկին Տարատինօվայի հետ—ոչ ձեր ծանօթ եկատերինա Պավլօվնայի, այլ սրա ամուսնու եղօր ւաղ հետ, որ իւր մարդուց բաժանւած է և հինգ երեխայ ունէ։ Դա մի սանձարձակ կին է, որքան անբարոյական, նոյնքան և այլանդակ։ Նիհար, դեղնած, պշկած, ոսկորները դուրս ցցւած, նա յիշեցնում է քաղցած կատուի։ Զեր թշւառ ամուսինը ամեն

օր նրան զարդարում է ծաղիկներով և թանգագին նըւելներով։ Այդ այլանդակ կսոշ մարդը մի հասարակ սպայ է...»

«Տիկին, ես թէկ ձեզ հետ շատ քիչ եմ ծանօթ, բայց շատ բիտեմ Ձեր կեանքից։ Երբէք ձեր կործ ամուսինն անկման այն աստիճանին չէր հասել, պիտ ամուսինն անկման այն աստիճանին չէր հասել, պիտիս այժմ։ Եւ ումժվ է փոխարինել Ձեզ։ Մի արարածով, որին կարելի է գնել 5 ոռորդով։

«Տիկին, վախկոտութիւն չը համարէք, որ ներկայ նամակը չեմ ստորագրում։ Իմ ազգանունը Ձեզ ոչինչ չի կարող ասել։ Ես Ձեզ հանդիպել եմ ընդամենը մի չի կրող ասել։ Մի Ձեզ համակրում է Ձեզ։ Աակայն, միթէ սարակութիւնը համակրում է Ձեզ։ Բայց այս պարզ այլ արդիներից այդքան յարգւած լինելով, չչք կադուք, ուրիշներից այդքան յարգւած լինելով, չչք կադուք ազգել Ձեր ամուսնու վրայ։ Ցաւլի է։ Ձէ որ բող ազգել Ձեր ամուսնու վրայ։ Ցաւլի է։ Ձէ որ բող ազգել Ձեր ամուսնու վրայ։ Ցաւլի է։ Վայ փոյթ չէ, նա վաղ թէ ուշ կը զղայ... կական դիրք։ Բայց փոյթ չէ, նա վաղ թէ ուշ կը զղայ...»

«Ձեր բարին կամեցող Ն.... Ն....

## XII

Կարդալով այս նամակը, մի վայրկեան մտածեցի գէն շպրտել նրան արհամարհանքով, ինչպէս շպրտում գէն առհասսրակ անստորագիր նամակները։ Բայց չարի։ Են առհասսրակ անստորագիր նամակները։ Բայց չարի։ Ոչ այն պատճառով, որ չը զգացի արհամարհանքի բառը ամիս պատճառով, այլ որովհետեւ արդէն չափից աւելի ւականաչափ ոյժ, այլ որովհետեւ արդէն չափից աւելի իմ ատելութիւնը դէպի Միքայէլ։ Ես պատրաստ էի ամեն մի փաստ գրկաբաց ընդունել նրա անկումը էի ամեն մի փաստ գրկաբաց ընդունել համար։ Ես գրեցի մի համաւելի ու աւելի շեշտելու համար։ Ես գրեցի մի համաւելի իւր մասաւելի նրան իւր նոր «յաղթուռ» համար այն դառն արհամարհանքով, որ ինձ թեան յուսախափ ամուսինների բաժինն է։ Գրեցի ուռնման յուսախափ ամուսինների բաժինն է։ Գրեցի ուռնման որպէսզի իւր նոր հոմանին էլ կարդայ, որպէս

զի նա էլ իմանայ, թէ ինչ տեսակ մարդու հետ է կապել յանցաւոր կապով:

Ահա Միքայէլի պատասխանը.

«Մինա! Դու ևս նախատում ինձ: Դու, որ թողել ես ինձ ծերութեան հասակում և հեռացել ագատ կեանք վարելու: Եթէ քաղցր է քեզ համար ագատութիւնը, ինչո՞ւ նա պիտի դառը լինի ինձ համար: Ինչո՞ւ ևս չը պիտի ունենամ իրաւունք ընտրելու ինձ համար մի ընկերուհի, որ թեթևացնէր իմ անբաղդ կեանքը:

«Ես գեռ չեմ արել այն, ինչ որ վերագրում է ինձ քո անյայտ թղթակիցը, բայց միթէ զարմանալի պիտի լինի, եթէ մի օր անեմ:

«Այդ անստորագիր նամակը, որի հեղինակ ես համարում եմ տիկին Տարատինօվային, ուրիշ ոչինչ է եթէ ոչ քու զրպարտութիւն: Եւ այդ զրպարտութիւնը ուրիշ ոչինչ է եթէ ոչ նախանձի արդիւնք:

«Լսիր, Մինա. այդ կինն է եղել քո իսկական թշնամին և ոչ ես կամ մի ուրիշը: Նա է, որ ամեն կերպ աշխատել է մեր մէջ ձգել խոռվութիւն և զըժտութիւն: Պատճմոն ես ուզում իմանալ: Լսիր, ուրեմն. նա ուզում էր բռնել քո տեղը: Այս, այս: Ես փաստեր ունիմ, ահա նրանցից մէկը. հէնց որ գու այստեղից հեռացար, հէնց որ իմացաւ, որ այլև մենք բաժած ենք, կսկոյն առաջարկեց ինձ իւր հետ կենակցել: Նա մինչև անգամ խոստացաւ թողնել իւր զաւակներին: Ես մերժեցի, և ահա նա վրէժ է առնում ինձնից այդ ստոր միջոցով, իմացիր նաև, որ նա թշնամի է իւր տեքոր կնոջը և աշխատում է ամեն կերպ ստորացնել նրան: Այնինչ ինքը չարժէ նրա գարշապարին անգամ:

«Բայց ես կը պատժեմ այդ անառակին: Կը պատժեմ յանուն իմ պատւի և քո հոգեկան հանգստութեան:

Ուղարկիր ինձ այդ անստորագիր նամակը: Թոյլ տուր, որ տեսնեմ նրա ձեռագիրը: Տալիս եմ ազնիւ խօսք, որ յետոյ կը լերազարձնեմ քեզ: Այս, պէտք է այդ անպատկասին պատժել: Եւ արդէն ես սկսել եմ պատժել, այսօր ես նրա փաստաբան ամուսնուն ասացի, որ այլ ես բանկի դատարանական գործերը նրան չեմ յանձնելու:

«Դու խնդրում ես, որ իրեղէններդ ուղարկեմ քեզը ներիր, որ առ այժմ չեմ կարող: Ամառը մօտենում է. երեխ, զու կերթաս որեէ ամարանոց: Լաւ չէ, որ նըրանք առ ժամանակ ինձ մօտ մնան: Այստեղ նրանք աւելի պահով կը լինին կողոպուտից: Սակայն, դու գիտես. եթէ պահանջում ես, որ իսկոյն ուղարկեմ— գրիր, կուղարկեմ:

«Կրկին խնդրում եմ ուղարկել ինձ այդ անստորագիր նամակը կամ գոնէ նրա պատճէնը: Այդ լիրը հէնց այն օրերին, երբ ինձ առաջարկում էր ինձ իւր հետ կենակցել, խաղում էր մի ուրիշի հետ: Մեր բանկի ծառայողներից երկուսը գիշերւայ երկու ժամին կի ծառայողներից երկուսը գրկում: Անա փողոցում նրան տեսել են Պատուխօվի գրկում: Անա թէ որպիսի մի արարած է յանդինում արատաւորել մի կողը, որի միակ հոգմ իւր զաւակների կը թութիւնն է:

«Բայց գուցէ նամակագիրը տիկին Տարատինօվան չէ, գուցէ նա իսկապէս մի տղամարդ է, ինչպէս կամենում է իւրան ցոյց տալ: Այն ժամանակ թոյլ կամենում բարոյականութեան մասին, որ ինքն էլ տղամարդու բարոյականութեան մասին, որ ինքն էլ կերպ է մի կողը մտերիմը, որին այժմ այդպէս արատաւորում է: Հարցը այդ մարդուն եթէ ճանաչում ես. եթէ ինքը գնել է այդ կողը փողով, հապա ի՞նչ ես. եթէ ինքը գնել է այդ կողը փողով, հապա ի՞նչ

մուսքը, եթէ նրա մեղադրանքը մինչև անգամ ճիշդ լինէր իմ մասին:

«Ես չեմ ուրանում, որ մերթ ընդ մերթ լինում եմ այդ ստորաբար զրպարտւած անմեղ կնոջ մօտ, որի հայրն, ի միջի այլոց ասած, ժեներալ է: Բայց ինչ մեծ յանցանք է լինել մի պատւաւոր ընտանիքում և այստեղ մի քանի վայրկեան հոգով հանգստանալ նրա զաւակների շրջանում:

«Ներիր, որ երկարացրի: Դրում եմ ոչ թէ ինձ արդարացնելու, այլ քո աշքերը բանալու համար: Մինա, մտածիր, ում ինչ գործն է, թէ ով ինչպէս է ապրում և ինչ իրաւունքով մարդիկ խառնւում են ուրիշների ինտիմ կեանքի մէջ, եթէ նրանք որևէ անձնական պատճառ չունին, եթէ նրանց ինքնասիրութիւնը վիրաւորւած չէ:

«Սակայն, ինչ եմ ասում, մտածիր իմ մասին ինչ կամենաս, անւանիր ինձ դաւաճան, անառակ, հաւատափոխ անգամ, ինձ համար՝ մինոյնն է: Ես պատասխանատու եմ միայն իմ խղճի առջև: Իսկ իմ խիղճը մինչև այսօր եղել է հանգիստ և յոյս ունիմ այսուհետեւ էլ կը մնայ նոյնը:

«Մի անգամ ևս խնդրում եմ ուղարկել ինձ այդ անստորագիր նամակը:

«Քո նախկին... Միքայէլ...»

Դու տեսնում ես, սիրելիս, ինչ ճիշուիտութիւն է բուրում այս նամակից: Այժմ լսիր ինձ: Վկայ է ժամանակակից բարք ու վարքերի երկինքը, - որ ես յիմար եմ: Ինչն: Որովհետեւ ամուսնական առագաստի մաքրութիւնը ես միամտաբար համարել եմ սրբազն պաշտամունք: Որովհետեւ յանուն այդ պաշտամունքի նաև յանուն իմ անձնասիրութեան ես ոչ միայն փափագել եմ, որ իմ օրինական կողակիցը մինի ինձի

շափ անարատ, այլև բիւր անգամ հաստատելով նրա բարոյական անկումը, միշտ և միշտ աշխատել եմ պաշտպանել նրան օտարների առջև:

Իսկ ի՞նչ է արել նա ինքն իմ վերաբերմամբ: Այն, ինչ-որ, երկի, պիտի անէր նրա նման մի անգուզական խելք: Նա ինձ ամենայն սառնարտութեամբ զրկել է կեանքի տարրական բարիքներից: Նա ինձ դաւաճանել է ամեն մի քայլափոխում և առաջին պատահած պոռնկի հետ: Նա ինձ անարգել է, հայնոյել, ծեծել, ստորացրել: Նա չի խնայել նոյն իսկ իւր ինքնասիրութիւնը և անուանարկել է ինձ օտարների առջև, ծանօթներիս, նոյն իսկ անծանօթներիս մօտ:

Անտարակոյս նա, իբրև խելօք մարդ, այդպէս պիտի անէր: Այլապէս ի՞նչ իրաւունքով է նա այժմ մեղադրում ինձ, որ ես ձգել եմ իրան «Ճերութեան» հասակում ու հիւանդ: Նա, այդ «Ճերը», որ գիշերները մինչև լոյս անառակների գրկումն է անցկացնում թէ այժմ և թէ այն ժամանակ, երբ ես նրան չէի թողել գեռ:

Նա ողբում է իւր մենութիւնը և կոկորդիլոսի արցունքներով է ուզում մաքրել իւր կեղտոս աւիւնը գէպի մի նոր հոմանի: Բայց ի՞նչ էր նա այն ժամանակ, երբ մենակ չէր, երբ տիրում էր ինձ ամենայն ազատութեամբ: Միթէ նա այն ժամանակ նոյնը չէր, ինչ որ այժմ, միթէ չէր լիզում անառակների կօշիկները և տուն գալով երեսիս թքում: Միթէ ես չէր զգում մենութեան դառնութիւնը, երբ նա ինձ ձգում էր տանը մենակ և լինում զւարճանում, ամենուրեք, ուր քաշում տանում էին նրան իւր այլանդակ կըրերը: Իսկ թողնում էր նա ինձ մենակ նոյն իսկ կըրերը: Իսկ թողնում էր նա ինձ մենակ նոյն իսկ ժամանակ, երբ հիւանդ էի և կարօտ իւր օգնուայն ժամանակ, երբ հիւանդ էի և կարօտ իւր

թեանը: Եւ նրա գաժանութիւնն երբեմն այնտեղն էր հասնում, որ լկտիաբար ասում էր.

—Ես հեռանում եմ տնից, որովհետև գու ձանձրալի ես, որովհետև «այդ» կանանց հետ ժամանակս աւելի ուրախ է անցնում, քան քեզ հետ:

Նա մի «պատւառը ընտանիքում» հոգեպէս հանգըստանալու կարիք ունէ: Նա, որ երբէք չի աշխատել դունել մի վայելուշ շրջան, ուր թէ ինքը և թէ ես կարողանայինք թեթևացնել առօրեայ կեանքի ձանձրոյթը:

«Ժեներալի ազիկ է» նրա նոր հոմանին: Լուսեմ ես: Այս, հաւատում եմ, բայց նոյնչափ, որչափ բարոնուհիներ էին, իշխանուհիներ, կոմսուհիներ նրա նախկին հոմանիները:

Նա այժմ պարսաւում է տիկին Տարատինօվային, բայց շատ ժամանակ է անցել, արդեօք, այն օրից, երբ այդ կինը նրա իդէալն էր իւր խելքով, տարտով, բարութեամբ, գեղեցկութեամբ, պտրկեշտութեամբ և էլ չըգիտեմ ինչ ինչ արժանաւորութիւններով: Բայց ինդիբն ինձ համար պարզ է, իմ ամուսնու անհաշտ, գուեհիկ բնաւորութիւնը այդ կնոջն էլ է հրել նրանից, ինչպէս հրել է շատ շատերին...

Նայիր, սիրելիս, մարդկային խղճի հակասութիւններին: Միքայէլը, մի վայրկեան ենթագրելով, որ անստորագիր նամակի հեղինակը տղամարդ է, մեղադրում է սրան, որ չի ամաչում խոստովանել, թէ ինքը հինգ ոռուրով գնել է նրա նոր հոմանուն: Իսկ ի՞նքը, միթէ ինքը նոյնը չի արել և չի անում հէնց այդ կնոջ վերաբերամբ:

Նա զատապարտում է այն անձանց, որ խառնում են մեր ընտանեկան կեանքի մէջ: Այս, ես էլ եմ զատապարտում, որովհետև չըկայ դրանից աւելի եղելի դեր մի օրինաւոր մարդու համար լինի նա կին թէ

տղամարդ: Բայց ժէր էր նրա այդ աշխարհայեացքն այն ժամանակ, երբ զեռ ոչ ոք չէր գիպել նրա ինքնասիրութեանը: Ինչու այն միջոցներին նա իրաւուքի ինպիր չէր յարուցանում: Ինչու նա չէր զատապարտում իւր հրէայ սիրուհուն, այդ սքանչելի Ռախսային, որ իւր ստորագրուած և անստորագիր նամակներով չէր դադարում պղտորել մեր ընտանեկան կեանքի անդորրութիւնը: Ինչու, ընդհակառակը, նրան դարձրել էր իւր զինակիցը իմ առանց այն ևս ապաբաղդուր գոյութիւնը աւելի թունաւորելու համար:

Վերջապէս, ինչու նա ինքը խառնեց հէնց այդ հրէուհու ընտանեկան կեանքի մէջ և բաժանեց նրան իւր ամուսնուց: Ինչու նա այն աստիճան անինքնասէր դանւեց, որ բացի իմ պատիւը ոտնատակ անելը մի պոռնիկ կնոջ մօտ, թոյլ տւեց ինձ խելագար հոչակել: Այն մարդը, որ մինչև ինձ հետ ամուսնանալը «պատրաստ էր իր կեանքը զոհել իմ պատւի համար»:

Սուտ ասողները ոչ միայն յիշողութիւն չունին, այլև լոգիկա:

Միքայէլը իւր «խղճի դէմ ոչինչ չի արել»: Հիանալի է, չէ: Կարծես, այդ մարդը երբ և է ունեցել է իմ վերաբերմամբ: Նա, որ ամեն քայլում ստել խղճ իմ վերաբերմամբ: Նա, որի դիմակը հարիւր անզամ է, կեղծել, խարել: Նա, որի դիմակը հարիւր պատուի իմ և իւր իսկ ստների տակ գցել և հարիւր ու մէկերորդ անզամ վերցըրել է գետնից, կարկատել և երեսին գրել: Նա, որի անամօթութիւնն այն տեղը հասաւ, որ յանուն նիւթական շահի մի երեկոյ քիչ էր միտում իմ անարատ անունը վաճառէր մի միլիօնտէր երիտասարդի լկտի քմահաճոյքին: Նա, որ իւր երեկոյ կուռքին այսօր կոխկոտում է ոտների տակ հոգու ամենայն հանգստութեամբ:



— Զըգիտեմ, — պատասխանեց Միքայէլը, չըհամարձակւելով ուղիղ նայել աչքերիս:

— Այս Բնչ է, — կրկնեցի ևս, աւելի ու աւելի տարւելով չար կասկածով:

— Զըգիտեմ, — կրկնեց նա, այս անզամ կարմրելով։  
Պարզ էր. հրէշն ապականել էր իմ անկողինս անզամ, բերելով այնտեղ իւր հոմանիներից մէկին։

Յետոյ, շատ յետոյ միայն նա փորձեց արդարանալ, բայց չըկարողացաւ, աւելի խճճւեց հակասութիւնների մէջ։

Սիրելիս, ես քեզ թոյլ եմ տալիս այս բոլորը կարգալուց յետոյ դարձեալ մեղադրել ինձ, դարձեալ համարել ինձ կամքով անզօր, հոգով տկար։

Ես ունէի մի սնուի յոյս՝ ուղղել մի խառնուածք, որ անուղղելի էր, ես ընթանում էի ընութեան անողոք օրէնքների գէմ։ Ի՞նչ արած, չըկարողացայ. խորտակւեց իմ յոյսը տասնեակ տարիների մուրճի հարւածներից։

Ես ահա ես այսօր մենակ եմ, բոլորովին մենակ...

### XIII

Ես ուղարկեցի մի նամակ բանկի պաշտօնեաներից մէկի անունով, խնդրելով նրան, որ կարդայ պատւարժան ամուսնուս մօտ։

Այդ նամակում ես թւելով նրա արարքները անառակութիւնից սկսած մինչև ինձ ոտների տակ գցելն ու ծեծելը, վճռապէս, յայտնեցից որ այլ ևս չեմ վերադառնալու իւր օտ։ Այս, այլ ևս ոյժ չունէի նուրից վերադառնալու այդ գեհենը։

Եւ խնդրեցի շուտով ուղարկել իմ բոլոր իրերը, որոնց նա տիրել էր ապօրինին։

Պարզ էր, որ բանկի պաշտօնեան կամ գուցէ ին-

քը Միքայէլը նամակս կարդացել էր տիկին Տարատի՛նօվայի մօտ, որովհետեւ, շատ չանցած, այդ կնոջից ստացայ հետեւեալ գրութիւնը, որ առաջ եմ բերում Միքայէլի բարոյական նկարագիրը լրացնելու համար։

« Սիրելի տիկին Մինա! »

« Չեր ամուսինն ինձ զրպարտել է — այս կարող եմ ասել նախ և առաջ։ Եւ զրպարտել է ամենայն անամօթութեամբ։ Ինչո՞ւ, կըհարցնէք. Պատճառն ինձ համար պարզ է, կասեմ։ Պէտք է խոստովանել, որ այդ պիսի անսկզբունք, անկիրթ, անխստիր մարդ ես կեան քումս չեմ տեսել, ուստի շտապում եմ ասել, որ նա ոչ քումս չեմ տեսել, ուստի շտապում եմ ասել, որ նա ոչ մանակարող է վիրաւորել ինձ, ոչ վշտացնել և ոչ մանաւանդ խախտել իմ մարդու հաւատը դէպի իմ հաւատարմութիւնը նրան։

« Տամնուերեք տարի է ես ամուսնացած եմ և այդ երկար ժամանակւայ ընթացքում երբէք չեմ անջատւել իմ ամուսնուց։ Մենք եղել ենք միշտ միասին ամառ, ձմեռ, Եւ լինելով միշտ միմեանց աշքի առջև, մենք այնքան վայելելով անդորր ընտանիկան կեանք, մենք այնքան վայելելով մեր յարաքերութիւնները, բացի մեզնից, ըստ պղտորել մեր յարաքերութիւնները, բացի մեզնից, եթէ, ի հարկէ, որևէ պատճառով մենք կըփոխենք մեր յարաքերութիւնները, որ ներկայումս լի են փոխադարձ սիրով ու յարգանքով։

« Դուք ևս լաւ էք ուսումնասիրել ձեր ամուսնուն։ Դուք ևս գիտէք, որ նա աշխատում է ամեն մի կնոջ հրապուրել իւր ոսկիներով։ Անձամբ ես մէկից աւելի անզամ լսել եմ նրանից, թէ շատ հարուստ է, կարող է այս անել, այն անել։ Ես հասկացել եմ նրա յետին կեղտոտ միտքը և միշտ պատասխանել եմ, թէ ինձ կեղտոտ միտքը ոչինչ արժէք չունէ, վասն զի կեան համար դրամը ոչինչ արժէք չունէ, վասն զի կեան»

քումս երբէք նրա կարիքը չեմ զգացել, թէ ես ուսիմ ապրուստի բոլոր բարիքները, սկսած սեպհական անից մինչեւ մի ազնիւ, սիրող և դէպի ինձ անչափ ուշադիր ամուսին և մի սքանչելի զաւակ—դուստր:

«Տիկին, միթէ նա կարող է հրապուրել մի ազնիւ ու ճաշակ ուսեցող կնոջ հէնց այն պատճառով, որ հարուստ է: Խակ նրա ապականւած հոգին, այլանդակւած աշխարհայեցքը, նրա արտաքինը, վերջապէս, նրա ալեխսառը մազիքը, միթէ այս բոլորը ոչինչ են: Եթէ ես լինէի նոյն իսկ դրամով հրապուրեող մի կին, դարձեալ կընրէի Զեր ամուսնուն, որովհետեւ գիտեմ նրա առասպելական ժլատութիւնը: Նա առատաձեռն է միայն խօսքով:

«Տիկին, մենք այդ մարդուն ընդունեցինք մեր յարկի տակ, համարելով նրան կըթւած ու զարգացած: Ընդունեցինք, որովհետեւ նրան մեզ ներկայացրել էր մեր ազգական Պլետանիկովը: Եւ հիսամթափեցինք չարաչար ու զզջացինք: Ի՞նչ է նշանակում այս: Այս, որ մենք կանայքս չըպիտի անզգուշութեամբ ամեն մէկին տուն թողնենք և ամեն մէկի հետ ծանօթութիւն ունենանք: Զեր ամուսինն այն մարդկանցից է, որոնք չունին իրաւունք օրինաւոր տան շէմքը ոտ դնելու:

«Այսո, ափկին Մինա, զուք իրաւացի էք, լաւ պիտի ճանաչել Զեր ամուսնուն նրա մասին ճիշդ գաղափար կազմելու համար: Նա շատ ճարպիկ է իւր թերութիւնները ուրիշներից ծածկելու մէջ: Նրա լեզուն կարող է շատերին խարել, և ես չեմ զարմանում, որ Դուք խարեւել եք այնպէս անողորմաբար Զեր պատանի հասակում: Նա, բացի արաւաւոր լինելուց, և անսամօթ զրպարտող է: Եւ քանի քանի անգամ է Զեզ զրպարտել մեզ մօտ իսկ, ասելով, թէ Դուք հիւանդէք, ներկայացին, թէ զուք թունաւորում էք նրա գոյութիւնը:

«Զըգիտեմ ի՞նչն էլ այլես կապում Զեզ մի այդպիսի հրէշի հետ, երբ մի անգամ արդէն ճանաչեցիք նրան: Գուցէ անձնասիրութիւնը, ամօթի զգացնումը, հասարակական կարծիքը: Եթէ այսպէս է, հասկանալի է Զեր ազնիւ զոհաբերութիւնը: Բայց, հաւատացէք տիկին, չարժէր այդ բոլորը Զեր երիտասարդութեանը: Դուք չըպիտի զոհէիք Զեր գոյութեան լաւագոյն տարիները հասարակական կարծիքին որքան ևս անսպոք մնէր այդ կարծիքը:

«Սակայն լաւ է ուշ, քան երբէք, Եւ ես ուրախ եմ Զեզ համար, որ, վերջապէս, սթափել էք և կարող էք հատուցումը տալ այն մարդուն, որ արժանի է խստագոյն հատուցման: Բայց նա դեռ յոյս ունէ, թէ մի օր Դուք պիտի վերադառնաք իւր մօտ և ամենքին ասում է, թէ մի տարսոց աւելի չէք կարող մնալ առանց նրա: Որպիսի վստահութիւն, այնպէս չէ: «Նկարագրեմ, արդեօք, թէ նա ինչ անվայել կեանք է վարում այժմ իսկ: Ոչ, չարժէ, զգւելի է: Ես շատ ուրախ եմ, որ մենք ոչ մի տեղ չենք հանդիպում միմեանց: Ես զագարել եմ նրան բարել և տեսնելիս երես դարձնում եմ նրանից: Նրաս ծաղրում և արհամարհում է ամբողջ հասարակութիւնը, իսկ նա ծեանում է, թէ այդ չի նկատում: Նրա մէջ ինքնասիրութեան նշոյլ անգամ չի մնացել:

«Նրա համար այժմ այն կանայք են բարձր բուլորից, որոնք նրա անառակութեան առարկաներն են և բացի անասնական կրթից չըկայ նրա մէջ ոչ մի զգացում դէպի կինն առհասարակ: Ես զարմանում եմ անգամ, որ նրա իշխանաւորները թողնում են նրան անգամ, որ նրա իշխանաւորները թողնում են նրան ամեն բան, ինչին որ մերձենում է:

«Միթարւեցէք, յարգելի տիկին, որքան նա է արհամարհւած, այնքան զօրեղ է հասարակութեան համակրանքը դէպի ձեզ։ Անկեղծ հոգով ցանկանում եմ Ձեզ հոգեկան անդորրութիւն, որին այնքան կարօտ էիք դուք Ձեր ամուսնու յարկի տակ։ Դունէ այժմ ապրեցէք Ձեզ համար։ Դուք ունիք իրաւունք, Դուք չափից դուրս վատ էք անցկացրել Ձեր լաւագոյն օրերը։ Դուք, որ ամեն միջոցներ ունիք երջանիկ ապրելու, —և երիտասարդութիւն, և գեղեցկութիւն, և հարստութիւն։

«Ինչ վերաբերում է Ձեր ամուսնու գրածներին իմ մասին, ես միանգամայն անտարբեր եմ։ Ինձ համար նրա լուսանքերը հաւասար են, ներեցէք ասել շան հաչոցին։ Իմ կեանքն ընթանում է այնքան գեղցիկ ու երջանիկ, որ ես աւելին պահանջելու իրաւունք չունիմ։ Ինձ միայն մի բան է վշտացնում, այն, որ Դուք գեռ հաւատում էք Ձեր ամուսնուն և զրում էք Ձեր ծանօթներից մէկին, թէ ես իբր կամեցել եմ բաժանել իմ ամուսնուց, թողնել իմ սիրեցեալ զաւակին անմայր։ Եւ մեմ համար, Աստած իմ։ —Մի մարդու, որ ընդհանուր ծաղրի ու արհամարհանքի առարկայ է։ Այս, սիրելիս, նա կերմօնտովի դեմ է, անհանդուժելի, հրապուրիչ։

«Բայց բաւական է։ Ներեցէք, որ Ձեզ ձանձրացրի։ Ասում են, որ Ձեր նախլին ամուսինը փափագում է գնալ հանքային ջրերը, բայց չի կարող։ Ասում են նրա վերջին հոմանին արգելում է և ստիպում է նրան տառապել անտառնելի շոքերում։

«Ամասինս Ձեզ ջերմ բարեներ է յուրմ։  
«Ճանկանում եմ Ձեզ ամենայն բարիք։

«Միշտ յարգող եկ. Տարատինօվա»։  
Կարդալով ոռւս տիկնոջ այս նամակը, նորից ուղեցին իմ մտքերը, նորից բացւեցին իմ վէրքերը։

Նորից թոյնը կուտակւեց իմ սրտում և ես ցանկութիւն զգացի մի անգամ ևս բարոյապէս հարւածել ինձ հալածողին, իմ կեանքը խորակողին։ Ի միջի այլոց, եմսկարազրեցի նրա մի անհաւատալի արարքը, որի մասին մոռացայ իւր ժամանակին զրել, սիրելի բարեկամ։ Այդ դէպքը նրա կոպտութեան և ժլատութեան զենիտն էր, լսիր, ուրեմն։

Մի անգամ, կամենալով ինձ համար նոր հագուստ պատվիրել, գրեցի մի չէկ և զնացի բանկ իմ սեպհական դրամագլխից մի գումար վերցնելու։ Հազիւ չէշ-կը տւել էի հաշւապահին, որ նա մատեանում նշանակէ, յանկարծ Միքայէլը երեաց, խլեց չէկը հաշւապահից և պատուեց։

Ես մնացի ապշած։ Ապշեց և հաշւապահը, ապշեցին և միւլ ծառայողները, որ ներկայ էին։ Ի՞նչ անէի։ Կարո՞ղ էի, արդեօք, ամուսնուս անօրինակ կոպտութեանը պատասխանել նոյն եղանակով։ Բարւոք համարեցի լը-ռել և կուլ տալ այդ հրապարակային անպատճութիւնը։ Բայց հարկաւոր էր մի կերպ դուրս գալ վերին աստիճանի անախորժ դրութիւնից, ուստի ես աշխատեցի ծիծաղել, ասելով։

—Ես կատակ էի անում, ինձ փող հարկաւոր չէ։  
Եւ, շրթունքներս կրծոտելով, դողդոջուն քայլեցով դուրս եկայ բանկից շառագունած, տանելով ինձ հետ մի խումբ օտարեների ծաղը թէ կարեկութիւնը —չըգիտեմ։

#### XIV

Քսան տարին եղենագործի բարձրագոյն պատիճն է։ Այս ինչ ամուսնական կեանքն ինձ համար եղել է աւելի քան տաժանակիր աշխատանք։ Նա եղել է անընդհատ ինքվիզիցիա—հոգեկան և մարմնաւոր։

Բայց միթէ միայն իմը. ինչու ոչ հարիւրաւոր, հազարաւոր կանանց կեանքը։ Որքան ևս խոշոր է իրենք և ըրէ Միքայէլն իմ աշքում, սովորական է ուրիշը և աշքում, որովհետեւ բացառութիւն չէ։ Այդ, հարցների աշքում, որովհետեւ բացառութիւն չէ։ Այդ, հարցների աշքում, որոնց համար չեն այն նում եմ ինձնից խելօքներին, միթէ տիսմար չեն այն նում և նախլից իմ կեանքը մի երջանիկ երազ է։ Միթէ նրանք նական կեանքը մի երջանիկ երազ է։

նման չեն այն գառնուկներին, որոնք փարախից դուրս են վազում ուրախ ուրախ ոստոսալով, չըղգալով, որ իրանց սպանդանոց են քշում:

Ոչ ոչ, ես աւելին կամեմ. միթէ տխմար չենք մենք կանայքս առհասարակ, որ ամուսնութիւնը սիրոյ պարտաւորական տուրքն ենք համարում: Սիրել, այս, ինչո՞ւ չէ. դա մեր հոգու պահանջն է, բայց շղթայել մարդկային այդ լաւագոյն զգացումը օրինական ամուսնութեան անողոք կապանքներով, ներիր, ես այդ համարում եմ զաւադրութիւն բնութեան սրբազն օրէնքների դէմ: Եթէ ամեն ինչ ենթարկած է էվոլյուսիօնի օրէնքներին, ինչո՞ւ մարդ էակին համարում ենք ապահով այդ օրէնքներից լինի նա կին թէ տղամարդ: Զէ որ ինչպէս ամեն ինչ բնութեան մէջ հասունանում ու զարգանում է, երթարկելով անվերջ յեղաշրջումների, այնպէս և փոխում են մեր հայեացքները, ճաշակները ու զարաֆարները: Ինչո՞ւ եթէ մի տասնութ տարեկան ալջիկ սիրել է մէկին, պարտաւոր է քարացած մնալ այդ սիրոյ մէջ մինչև մահ յանուն չըգիտեմ ինչ վեհ գաղափարների: Մէրը փոփոխական է, որովհետև նա կեանք է, հետեարար պէտք է փոփոխին և նրա օրեկանները:

Ինձ թւում է, որ եթէ Միքայէլը լինէր նոյն իսկ իդեալական մարդ, այսօր ես նրան կըհանդուրժէի, և միմիայն այսքանը, աւելի ոչինչ: Կըյարգէի, բայց չէի սիրիլ:

Ես ունէի լիուլի իրաւունք նրան պատժելու թէ կուզ հէնց այն զէնքով, որով նա ինձ տանջեց տասնեակ տարիներ: Ես այդ չարի, որովհետև չըկարողացայ անել: Ցաւումնեմ, անհունապէս ցաւում, որ չըկարոցայ:

Այժմ այլ ևս ուշ է:

Նորերս ծանօթացայ մի պարոնի հետ, որ անմիջապէս սկսեց հետամուռ լինել ինձ այն յանդինութեամբ, ու միայն տղամարդկանց է վերապահնեած և որը, չգիտեմ բարոյական ինչ տխմար օրէնքների հիման վրայ, արգելւած է մեզ, խեղճ կանանց երբ ես այդ պարոնին զգալ տւեցի, որ արդէն շատ է շտապում, նա ասաց.

— Տիկին, նոր չէ, որ ես հետաքրքրումկմ ձեզնով: Վաղուց էք գուք զրաւել իմ ուշադրութիւնը: Ես չըկարողացայ զսպել իմ դառը հեգնանքը և գոչեցի:

— Այս ախ, որքան երջանիկ եմ ես և յիմար, որ այդ չըգիտէի:

Նա շփոթեց, ապա սկսեց նկարագրել իւր կեանքը տիպուր գոյներով: Պարզւեց, որ «ինեղնը» կրել է անհուն տառապանքները: Ահ, չես կարող երևակայել որպիսի հոգեկան հաճոյքով էի լսում, որ այդ տառապանքների պատճառը կանայք են եղել: Դա յագուրդ չըստացած վրիժառութեան զգացումն էր, որ բորբոքւց իմ մէջ մի վայրկեան: Ես նախանձեցի այն կանանց, որ գիտեն տանջել տղամարդին, գիտեն խորովել նրանց իրանց սեպճական ճարպի մէջ:

Ես անխօս էի, պարոնը զգացւած: Նա արտասւեց անգամ, յիշելով իւր անցեալը և, երեի, յոյս ունենալով մօտալուտ ապագայի վրայ: Բայց նրա արցոնքները թւացին ինձ այնչափ միայն անկեղծ, որչափ անկեղծ եղան Միքայէլի սիրոյ երդումները:

— Բաւական է, գոչեցի ես նոյն հեգնութեամբ, գուք տղամարդիկ տկար էք այն ժամանակ, երբ մենք կանայքս սառն ենք դէպի ձեզ, և զաժան հրէշներ այն վայրկեանից սկսած, երբ մենք հաւատում ենք ձեզ: Ես ձեզ չեմ հաւատում:

Օօ, սիրելիս, գիտեմ, որ զօրեղ է քո կանացի հրապոյրը: Ապա մեծ յանցանք գործած կըլինիս մեր սեռի վերաբերմամբ եթէ այդ զէնքը գործ չըդնես մեր ոխերիմ թշնամու—տղամարդի դէմ խոճի այն հանգստութեամբ, որով նա ինքն այնքան ցինիքարար պարծենում է մեր անձնասիրութիւնն ու պատիւ ոտնատակ անելիս:

Գիտես ինչ է անում այժմ իմ նախկին ամուսինը: Զուր չեն ասում, թէ բաւական է, որ մարդ մի անգամ ոտ գրեց թեք հարթութեան վրայ, նա պիտի գլորւի, զլորւի մինչև յատակն անդնդի:

Միքայէլը կուել է իւր վերջին հոմանու հետ, այն քնքոյշ էակի, որին ժեներալի գուստը էր անւա-

նում: Ասում են, որ նա այժմ հիասթափւած է բոլոր տեղական կանանց վերաբերմամբ: Ի հարկէ, որ կինը կարող է գնահատել նրա քնքոյշ հոգին, զգայուն սիրալ, խելքը, բարութիւնը, առատաձեռնութիւնը:

Բայց Խուսիան ընդարձակ է, աշխարհը լայնածաւալ: Եւ ահա ծերունի էրօտօմանն ինչ է անում իւր բարեկամների ասելով: Զը գիտեմ Պետերբուրգում թէ Մոսկվայում հրատարակւում է մի բուլվարային լրագիր, որ, եթէ չեմ սխալում, կոչւում է „Երանակայ գազետ“: Ասում են, որ մի քանի անգամ Միքայէլն այդ լրագրում մի որոշ նօմերի տակ յայտարարել է, թէ վնատրում է այս ինչ հասակի, բնաւորութեան, դոյնի «ընկերունի» կեանքի: Հարկաւ, նրա հրաւէրն արձագանք է գտել, եկել են ցանկալի էակները, ապրել է նրանց հետ կարճ ժամանակ և բաժանւել: Երսի նախկին իդէալիստների համար նորագոյն իդէալներ որոնելու մի ժամանակակից ձև է:

Ինձ ցոյց տւեցին նրա հետեւալ յայտարարութիւնը.

«Նօմեր (այս ինչը), միջին տարիքի, միանգամայն առողջ, բարի, հանգիստ ցանկանում է ունենալ բարեկամունի, որ լինի երիտասարդ, սիրուն, շիկահեր, բայց մեծ քթով... Դիմել...»


Թէ ինչու շիկահեր—հասկանալի է, բայց թէ ինչու մեծ քթով—չըդիտեմ:

Ես վերջացրի: Շնորհակալ եմ, սիրելիս, որ առիթ տւեցիր սիրատ թեթևացնելու:

Այժմ ես ազատ եմ և ողբում եմ իմ երիտասարդութիւնը: Կորաւ իմ այդ սքանչելի մաքարիտը և ում պատճառով: Դատիր ինքով...

Քեզ սիրող և համբուրող Միքայէլ





336